

Reaper party
Sun Dec 28
to 29 1928

891.5
F-12

ԲԱՐԱ
ԹԱՀԷՐ
ՕՐԻԱՆ ՀԱՄԱԴԱՆԻ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԵՒ
ՂԱԶՍԼՆԵՐ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՊԱՐՄԱԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ

ԹԻՒՐԻՆ ՇՐԲԷՄԵՆ

891.5

F-12

Է Հ Ր Ա Ն
1930.

891.5

F-12

ար-

26 JUN 2006

ԲԱԲԱ ԹԱՀԷՐ ՕՐԻԱՆ ՀԱՄԱԴԱՆԻ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԵՒ ՂԱԶԱԼՆԵՐ

ԹԱՐԳՄ. ՊԱՐՍԿԵՐԷՆ ԲՆԱԳՐԻՑ

ԽՈՒՐԷՆ ԸՐՐՈՂԱՄԵՆՆ

Թ Է Ն Ր Ա Ն

1930

Les
Quatrains et ghazals
de
BABA TAHIR

Traduits du persan en arménian

par

R. ABRAHAMIAN

Téhéran

1930

~~~~~  
Imprimerie «PHAROS» Téhéran

22/500



26 .02. 2013

9216

Qualtraine et gharala  
de  
BABA TAHIR

Projet de loi sur le mariage

ANNAHANIAN



397155

Հրախառ Արեւի

և

Հրաշունչ Բանաստեղծների աշխարհին

Ի Ր Ա Ն Ի Ն

Նուիրաբերում է թարգմանիչը

**I ԱՌԱՋԱԲԱՆ  
ԵՐ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ**



## Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Համաշխարհային պատերազմից և յետպատերազմեան յեղիեղումներից յետոյ նկատելի է առանձին հետաքրքրութիւն դէպի արևոյ Արևելքը, որ այսօր սթափուած իր դարաւոր նիրհից, ճգնում է ուղղել իր կորացած մէջքը: Ազգերի հոգեկան շարժումների պատկերաւոր և շօշափելի արտայայտութիւնը գրականութիւնն է և բոլորը շտապում են ծանօթանալ Արևելեան ազգերի հոգեկան աշխահի այդ քնքոյշ արտազրութիւնների հետ: Կազմուած են գրական ընկերութիւններ, արևում են կազմակերպուած [Ժարգմանութիւններ<sup>1</sup>] և Արևմուտքն ու Արևելքը մտաւորապէս մի քննում են իրար:

Մեզ, որ անդառնալիօրէն խաբլիսիւ ենք ձգել արևելեան ազգերի ծովում, բայց միշտ խմբուած ենք եղել Արևմտեան կուլտուրականութեան դրօշակի տակ, թերևս ամենից աւելի պատշաճ էր ձեռք բերել Արևելքի, գոնէ մեր անմիջական շրջապատի ծանօթութիւնը, որից միանգամայն զուրկ ենք. մեր հայեացքը բնականաբար պէտք է ուղղուի առաջին հերթին դէպի հարեան կողմը, Պարսկաստանը, որի պատմական հարուստ անցեալը

1) Les classiques de l'Orient, Paris. Всемирная литература Иллюстрация.



ծնունդ է աւել մի իւրայատուկ գեղանի գրականութեան:

Սակայն այն մեծ ժողովուրդը, որ տասնեակ դարերի ընթացքում աւագ գրկիցի դեր է ունեցել մեր ազգի նկատմամբ, ընթացք և ուղղութիւն է տուել մեր քաղաքական անհաստատ քայլերն, ամբողջ գինաստիւ շնորհելով մեզ, բայց աւելի յաճախ անազոյն շահագործման է ենթարկել մեր քաղաքական ձգտումները, որ զեկալարել է մեր նախնական կուլտուրական երկրուն քայլերը, որի հզօր ազդեցութիւնը տարածուել է մեր պատմական կեանքի բոլոր ծալքերում—լեզուի, կրօնի, սովորութիւնների, նկատուկացի և բարքերի, որ մի խօսքով բաղմակողմանի և ընդհանուր առմամբ ճակատագրական դեր է խաղացել մեր երկարաձիգ պատմական կեանքում, այդ *պարսկ ժողովուրդը* ներկայումս խոշոր չափերով անծանօթ է դարձել մեզ: Հարկւր տարրի շարունակ կորցրած լինելով իր քաղաքական ազդեցութիւնը և մի քանի դարերի ընթացքում զրկուած լինելով անմիջական կուլտուրական ազդեցութիւնից մեր երկրի վրայ, պարսիկ ժողովուրդը կատարելապէս անծանօթ է դարձել մեր բնիկ ժողովրդին և ներկայումս չփոթւում է թուրք ազգաբնակչութեան հետ, որ միայն կրօնով և քաղաքական բերումներով կապ ունի պարսիկներին հետ, իսկ ծագումով և լեզուով միանգամայն տարբեր է: Ոչ միայն մեր ժողովրդը, այլ և մեր հեղինակները, սկսած Խաչատուր Աբովեանից, ամեն քայլափո-

խում չփոթում են պարսիկներին թուրքերի հետ, վերջիններին յաճախ «պարսիկ» անունը շնորհելով: Ճիշտ է, մեզնում հանրածանօթ իրողութիւն է, որ գոյութիւն ունին ինչոր «փարսի» լեզու և երգեր, բայց սրն է նրանց գործածող ժողովուրդը, մնում է մշուշ մէջ: Իսկ այն գեղարուեստական բարձր արժէքները, որոնք այնպէս առատօրէն ամբարտաժ են պարսիկ մտաւոր անդաստանում, միանգամայն անծանօթ են մնացել մեզ: Հայ մտաւորականը պարսիկ գրականութիւնից, որ թերևս ամենագունն է համաշխարհային գրականութեան մէջ, մինչև վերջերս լսել էր երկու-երեք անուն—Փէրզովսի, Սա'դի, Հաֆէզ, որիչ ոչինչ: Սամուէլ Գիւլաթեանի թարգմանութիւնները Փէրզովսիից լինելով հատուածական, ամբողջական տալստութիւն չէին կարող թողնել և նրանք տարածուած էլ չէին, միւս հեղինակներից չը կար և ոչ մի աղ:

Մենք, ինչպէս արեւելահայերս, այնպէս մանաւանդ արեւմահայերը, մի տարօրինակ յամառութեամբ խուսափում էինք Արեւլքի, Նոյնիսի մեր անմիջական հարեանների ծանօթութիւնից և սնում ուս և եւրոպական գրականութեան թափփոփուններով և մեծ մասամբ անյաջող նմանողութեամբ:

Իսկ ինչ գրութեան մէջ է հարցը պարսկահայերի մօտ. պարսկահայերը, յատկապէս զաղուինից հտրաւ

ապրողները, բնականաբար լաւ ճանաչում են պարսիկ ժողովրդին, իրենց մերձաւոր հարեանին, նրա առանին կենցաղում, ծանօթ են նրա ազգային առանձնայատկութիւններին, բայց միայն մատներով կտրելի է թուել այն անձնաւորութիւններին, որոնք ճանաչում են պարսիկ հեղինակներին: Մինչև վերջերս պարսիկ լեզուն աչքաթող էր արուած հայ դպրոցներում և բարձր դասարաններէ աշակերտները լաւագոյն գէպըում սովորում էին մի քանի չէր (բանաստիգծութիւն) Սա'դիից (որ ամենից աւելի տարածուած բանաստեղծն է Պարսկաստանում) մեծ մասամբ առանց հեղինակի անունն իմանալու, այս պայմաններում հայ ինտելլիգենտ դասակարգի վերաբերմունքը գէպի պարսիկ գրականութիւնը միանգամայն անտարբեր է և զրան քիչ չէ նպաստում նիւթի շաւիղանց բարդութիւնը և նրբութիւնը:

Վերջերս միայն ոկսեցին թարգմանութիւններ արուել պարսիկ գրականութիւնից հանգութեալ զոկա. Թրիաքեանի, պ. Յ. Միրզայեանի և այլոց ձեռքով և ներկայումս հետաքրքրութիւնը գէպի պարսիկ գրականութիւնը սկսել է աճել: Եղածն, ի հարկէ, շատ քիչ է աւելայն եթէ նկատել ունենանք պարսկէրենի ճոխութիւնը և գրականութեան առանձնայատկութիւնները, չենք կարող չը խոստովանել, որ թարգմանութիւնները պարսկերէնից շատ աւելի դժուար և պատասխանատու

են, իսկ ձեռնահաս պարսկագէտներ շատ քիչ ունենք:

Թարգմանութիւնները նկատմամբ ընդհանրապէս պէտք է նկատել, որ նրանք պէտք է կատարուեն ոչ թէ բառացի և կուրորէն հետեոգութեամբ, այլ անբռնադրօսիկ գրական լեզուով, սակայն ոչ այնպէս, որ նա ուստ քննադատներից մէկի ասածի նման վարժովիւրի օծանելիքով համակի բանաստեղծի հոգին, ուրիշ խօսքով բանաստեղծը ճարտասանական վարժութիւններէ նիւթ չըպիտի դառնայ թարգմանչի ձեռքում. պարսիկ բանաստեղծի թարգմանութիւնը կարդացողը պէտք է թարգմանչի լեզուով կարգայ պարսիկ բանաստեղծին և ոչ թէ թարգմանչի բանաստեղծութիւնները, այսինքն պէտք է կատարեալ գաղափար կազմի բնագրի արտաքին ձևի, արտայայտութեան եղանակի, հեղինակի մտքերի, շարայարութեան, սրամիտ նրբութիւնների և այլ հնարաւորութիւնների մասին: Այս պայմանները թերեւս դժուար է դնել սլաւոնիկ բանաստեղծներէ կարողացի թարգմանչիներէ առաջ, որովհետեւ այդ երկու կարգ լեզուների և քաղաքակրթութիւնների մէջ անդունդ կայ, բայց այդ պայմաններն անհրաժեշտօրէն պէտք է նկատել ունենայ հայ թարգմանիչը, որի լեզուն պարսկերէնի ոգու հետ պոտենցիալ հարազատութիւն ունի: Այս անհրաժեշտ է մանաւանդ այն պատճառով, որ մեր գրականութիւնը մեծապէս ազդուել է պարսկականից

և զանազան զրական ձևեր պարսկականի հետևողութեամբ սեպականութիւնն են դարձել մեր գրականութեան և անհրաժեշտ է լոկ պնդումներ լինարէն կապող թիւերը գտնել, լուրջ որոնումներ անել, ուսումնասիրութիւններ կատարել:

Այս նկատումներով մենք մեր թարգմանութեան մէջ աշխատել ենք պահել թահէրի քառականների չափը և արտաքին ձևը, այսինքն յանգերի բարդ սխառմը և հնարաւոր չափով բաւարարել վերոյիշեալ այլ պայմաններին: Թարգմանելով ժողովրդական բառառով գրուած բանաստեղծութիւններ, բնական է, որ մենք էլ զիմէինք մեր բարբառային լիզուին և եթէ այդ մենք չենք աւել տւելի մեծ չափերով, դրա համար միայն ցուել կարող ենք:

Մեր այսպիսի նկատումների դուղնաքեայ երախայրիքն այսօր հրապարակ հանելով, դնում ենք ընթերցող հասարակութեան սեղանի վրայ որպէս մի լուսայ, ենթադրելով այն ձևունհաս անաշուքնադատութեան:

Ռ. ԱՅՐԱՏԱՄԵՆՆ

## ՆԵՐԱԺՈՒԹԻՒՆ

Բ Ա Բ Ա Թ Ա Հ Է Ր.

Պարսիկ գրականութիւնն իր ծաղկման շրջանում, որ տեւել է հինգ դար՝ Յէրգովսու շրջանից (11-րդ դար) սկսած մինչև Չահաբբասի դարը, իր շարքերում տառնեակներով է թուում հոյակապ բանաստեղծների անուններ, որոնք հմայիչ տպաւորութիւն են գործում ընթերցողի վրայ իրենց էկզոտիկ բնութեամբ, մաքրի խորութեամբ, զգացմունքների յորդովեամբ, պատկերաւորութեամբ և արտայայտութեան գոգարիկ ձևերով: Նրանց մէջ իր պատաւոր տեղն ունի Համադանի „տիլոր“, բանաստեղծը (نادر-سريانی-مبدي)՝ *Բաբա թահէր*<sup>1)</sup>, „ղալանդար“, դարվիշների զլխաւորը (բարա), որ ինքն իրեն անուանում է երբեմն Համադանի սիւլոակ բաղէ, երբեմն ուէնդ, այսինքն անբարոյական սրիկալ: Նա օրիգինալ է իր կեանքի արտաքին երևոյթիւնով, օրիգինալ է և իր քերթուածներում: Նա մէկն է պարսիկ գրականութեան հիմնադիրներից և ինչպէս այդ սովորական է այդ գրականութեան համար, նրա մասին մենք համարեա ոչինչ չը գիտենք: Նոյն իսկ գրական աւանդութիւնները, որոնցով պերճօրէն դարդարուած են մեծ

1) 8. չորրորդ դարի վերջին տունը (մահմադան):

բանաստեղծներին չափերի անունները, այստեղ համարեա լիովին բացակայում են: Միայն նրա երախտապարտ ծննդավայրը (?) կամ քաղաքը, որի անունը կրում է նա իր մականուան մէջ, այն է համադանը, պահել է մի շարք աւանդութիւններ բանաստեղծի մասին որոնք սակայն երբեմն դուրս են սփռւում այդ սահմանից: Նկատի ունենալով, որ այդ աւանդութիւնները արժէքաւոր են թէկուզ նրանով, որ արտայայտում են ժողովրդի վերաբերմունքը դէպի բանաստեղծի յիշատակը, մենք առաջ ենք բերում նրանց, օգտուելով գլխաւորապէս Բաբա Թահէրի լիակատար դիւանի 1927 թ. Թէհրանում արուած հրատարակութեան միջի աղայէ Հէյլա Ալի Մահամադ է Աշադ համադանի յօդուածից:

### ԱՆԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ,

1. Բաբաթահէրը սովորութիւն է ունեցել այցելել տեղական հոգևոր դպրոցը և դիտել—ինչպէս ուսանողները (طالاب) դատում և վիճաբանում էին իրար հետ դանազան խնդիրների մասին: Թահէրը ոգևորւում է և ինքն էլ սկսում է սովորել, բայց շուտով յոգնում է և պարզամտօրէն հարցնում է ուսանողներից մէկին, թէ նրանք ի՞նչ են անում, որ կարողանում են այսքան զիտութիւն հաւաքել: Ուսանողը պատասխանում է, որ այդ դժուար չէ. նրանք լողանում են դպրոցի աւաղանում

(հովդում), և արժանանում այդ շնորհքին: Ձմեռուաբառնաշունչ ցրտերի շրջանն էր և աւաղանը պատած էր սառցի հաստ շերտով.<sup>2)</sup> Բաբաթահէրը վճռեց կոտրել սառոյցը և լողանալ աւաղանում, որքան և վտանգաւոր լինէր այդ: Նա այդպէս էլ արեց և գլխերով, երբ ուսանողները քնած էին, լողացաւ, իրեն շուտ տուն գցեց, հանգստացաւ և զգալով, որ ինքն էլ արժանացել է խորհելու և վիճելու շնորհքին, դուրս եկաւ ու ժողովարկում կրկնում էր բոլոր հանդիպողներին. «գլխերն անցկացրի որպէս մի քուրդ և լուսացրի որպէս արաբ»<sup>3)</sup>:

2. Ձմեռուայ սաստիկ սառնամանքին Թահէրն

1) Պարսկաստանում համարեա ամեն տուն ունի իր հովը (աւաղան) բակի մէջ, որի շուրջ գործէ ածւում լուացուելու, լուացել և ամաններ լուանալու համար: Շնորհիւ ջրի պակասութեան հովը առանին կենցաղի կարևորագոյն միջոցներից մէկն է, բայց և խոշոր շարք՝ շնորհիւ այն հակաառողջապահական պայմանների, որոնցով շրջապատուած է նա:

2) Համադանը ծովի մակերևոյթից 6160 ոտն. բարձրութիւն ունի և համարւում է Պարսկաստանի ամենաբարձրագիւր քաղաքը:

3) Հակադրւած են քուրդն ու արաբը՝ որպէս ներկայացուցիչներ հակահիւթեան և իւրեք քաղաքակրթութեան:—Այս աւանդութիւնը Թահէրի մօտին չեղանէ-Ալլէնը նոյնպէս լսել է Բուշրի անգլիական բեղիզեմտ Գէմբալի մերձաւոր մի տեղացի գիտունից ասելի դարգուրւած ձևով և թարգմանաբար դետեղելի իր „The Lament of Baba Taher“ գրքում, Էդնդան 1902, ներածութիւն XIV. նոյն աւանդութիւնը լսել է Թէհրանում նաև պրոֆ. Ժուկովսկին:

ապրում էր Ալվանդ սարի<sup>1)</sup> լանջին. ներքին կրակից, որով ի էր բանաստեղծի կուրծքը, շըրջապատի ձիւնը մէկ զար [գաղ] շըջագծով ջուր էր դառել և գետինն անցել և շուրջն ամբողջ գարնանային բոյսերով էր զարդարուել:

3. Թահէրի քեռորդին աստղագէտ էր. մի անգամ գրքերում չը կարողանալով գտնել մի աստղի տեղը, որոշեց հարցնել մօրեղբօրից<sup>2)</sup> և բարձրացաւ Ալվանդ. նա ահաւ Թահէրին երեսն ի վար գետնատարած էքստաղի մէջ: Յիշկուլ, որ իսլամի շարիաթի արգելուած է երեսի վրայ քնել, նա դարմացաւ, թէ ինչո՞ւ հօրեղ-քայրը պարտադանց է գտնուել: Թահէրը գուշակելով նրա միտքը, բարցրածայն ասաց. «Այդ արգելքը վե-րաբերում է քնած դրութեան, բայց ես արթուն եմ»: Կապա նա մի շէկար գծագրեց գետնի վրայ և քեռորդին զլտնելով իրեն հետաքրքրող խնդրի լուծումը, առանց այդ մասին խօսք բաց անելու հեռացաւ:

4. Երբ Այնօլ դողաթ շամաղանիին<sup>3)</sup> գատապար-

1) Բանաստեղծների (ի միջի այլոց՝ Բաբա Թահէրի) երգած ջըա-ռաւ և կանաչադուր գեղատեսիլ յեռքը, շամաղանի մօտ հարա-արկմաւ. կողմում 3400 սետր բարձրութեամբ, որ իր կրծքին սեղ-մած ունի Գարեհ Վշտապեանի արձանադրութիւններից մէկը:

2) Տ. քառեակ № 32.

3) «Դատաւորների զլխաւոր», «զաղի» (զատաւոր) բառից, նշանաւոր դրականակտ անձնուորութիւն շամաղանում, որ սա-կայն մեռել է համաձայն Հօջի խալիֆայի՝ հէջրի 525 կամ 526 թ. (1130-31 թ.) և ուրեմն Թահէրին ժամանակակից լինել չէր կարող: Տ. նաև Բաբա Թահէրի դիւանը տոյն յօդածում էջ 16 17:

տեցին հերիտիկոսութեան մէջ և զլխատեցին և մար-մինը ձգեցին «համաղանի» կոչուած հրապարակը (նեք-կայումս Զողալի, այսինքն ածուխի հրապարակ), երբ զիտողները խոնուել էին մարմնի շուրջը, Բաբա Թահէրը, որ այդտեղից անցնում էր, տեղեկանալով եղելութեան մասին, մօտեցաւ ոտով խիսեց դաղի մէջքին և ասաց. «Աստծու մարդն էսքան չի քնիլ». Այն-օլ-Ղօղաթն ան-«հիշապէս վերկացաւ, կարած գլուխը դրեց թիւ տակը և սկսեց վազել. դիտողները հետեցին նրան, դաղին վազեց մինչև հասարակական գերեզմանատունը և մի փոս գտնելով, թաղուեց մէջը: Փոսը մինչև այժմ կոչ-ւում է Այն-օլ-Ղօղաթի փոս (چاله عين القضاة):

5. Մի անգամ մի հաւաքոյթում Բաբա Թահէրը քարոզում էր և նախազգուշացման և սարսափեցման տո-զերն (تَوْبَت) էր կարդում Ղօրանից. քարոզի վերջը հան-գիսականները մի անկիւնում խոնաւութիւն նկատեցին և պատճառը հարցրին Թահէրից. նա ասաց. «Մի փերի ներկայ էր ժողովին. լսած խօսքերի ազդեցութեան տակ ամօթի յորդութիւնից ջուր կտրեց և գետինն ան-ցաւ և այս խոնաւութիւնը նրա հալուելու հետքն է»:

Այսպիսով տեղական աւանդութիւնները Թահէրին ներկայացնում են որպէս մի կիսախելագար, բայց հրա-շաղործ սուրբ անձնաւորութիւն և մեծ յարգանքով կն-վերաբերում դէպի նրա յիշատակը:

Բաբա Թահէրի սրբութիւնը դուրս է գալիս սուլթանական աւանդութիւններէ սահմանից և թեւակոխում է աղանդների միջավայրը: Ahle-Haqq կամ Ալիէլահի կոչուած պարսիկ աղանդաւորները (որոնք աստուածացնում են Ալիին) Բաբա Թահէրին որոշակի պաշտում են իրենց սրբերի շարքում: Նրանց կրօնական գիրքը—«Սաբանշամը» դասում է նրան Բաբախօշինին (աստուածութեան 7 արտայայտութիւններից երրորդի) շրջապատող չորս հրեշտակների թւում որպէս մարմնացում Ազրայիլի և Նոսայիրի (Ալիի գլխաւոր հաւատացեալի): Պատմական տուեալներ—գրաւոր աւանդութիւններ:

Միակ գրաւոր աւանդութիւնը, որ պատմական արժէք ունի, երևան է հանուած Քէմերիջի համալսարանի պոէթիստը հանգուցեալ Բրաունի ձեռքով. այդ մասին նա նախապէս յայտնել է Բաբա Թահէրի անգլերէն թարգմանիչ և հրատարակիչ Հերոն-Ալէքին, ապա ընդգրկել թարգմանաբար դիտեցել է իւր A Literary History of Persia աշխատութեան մէջ (հատ. II, էջ 260), որտեղից և մենք ամբողջապէս թարգմանաբար դնում ենք ստորեւ: Այդ աւանդութիւնը վերցրած է ձեֆերի ժողովածուի մի գրքից, որի վերնագիրն է راجات الصدور و آيت السور (Հանգիստ կրճերի և նշան ուրախութեան), գրուած է հէջրի 599-600 թ. (1202-1203 թ.) և հետևաբար պարունակում է հին և փաստահիլ տեղեկու-

թիւներ: Թահէրին վերաբերեալ կտորը հետևեալն է: «Ես լսել եմ, որ երբ սուլթան Թողլուլ Բէգը<sup>1)</sup> եկաւ Համադան, այնտեղ սրբերից (այսինքն սոֆիներից) երեք աւագներ կային—Բաբա Թահէր, Բաբա Ջա'ֆար և Հէյա համա: Ներկայումս Համադանի դարպասի մօտ մի փոքրիկ սար կայ, որ կոչոււմ է Խէղր. այստեղ կանգնած էին նրանք: Սուլթանի հայեացքն ընկաւ նրանց վրայ. նա կանգնեցրեց իր առաջապահ դունդը, ձիուց ցած իջաւ, մօտեցաւ և համբուրեց նրանց ձեռքը: Բաբա Թահէրը, որ մի քիչ տարօրինակ էր իր ձևերով, ասաց նրան. «Ո՞վ թուրք, ինչ ես կամենում անել Աստուծոյ ժողովրդին».—«Ինչ որ դու հրամայես» պատասխանեց Սուլթանը: «Անիլ լաւ է արն այն, ինչ Աստուծոյ է հրամայում», ասաց Բաբան. «Յիրաւի Աստուծոյ հրամայում է արդարադատութիւն և բարեգործութիւն»<sup>2)</sup>: Սուլթանը լաց եղաւ և ասաց. «Ես այդպէս կանխմ. Բաբան բռնեց նրա ձեռքը և ասաց. «կը վերցնեմ դու այս ինձնից».—«Այն», պատասխանեց սուլթանը. Բաբան իր մատին դրած ունէր մի կտորած էրրիլի<sup>3)</sup> գլուխ, որով նա երկար տարիններ կատարում էր իր լուացումները: Նա դրեց այդ սուլթանի մատը, ասելով.

1) 1037-1063

2) Ղորան, XVI, 92.

3) Պարսկերէն «աֆթարէ» (آفتاب)՝ ջրի աման, որ զործ է ածուում լուացումներ համար:

«այսպէս քո ձեռքն եմ յանձնում աշխարհի կառավարութիւնը. արդարադատ եղեր»: Սուլթանը պահում էր այդ իւր ամուլեաների մէջ և երբ մի ճակատամարտ էր նախատեսուում, դնում էր մատին: Այսպէս էր նրա մաքուր և անկեղծ հաւատը. որովհետեւ մահմետական կրօնի մէջ չը կար մէկը, որ աւելի ջերմեռանդ և աւանդապահ լինէր քան նա:

Եթէ նկատի ունենանք, որ յիշեալ ղէպը կարող էր տեղի ունենալ մօտաւորապէս 1055-58 թ., պարզ կը լինի, որ Բաբա Թահէրը ծագելում էր 11-րդ դարի կիսում, ժամանակակից էր Բու-ալի-սինայի [Արսենային], Ֆէրդուսուն և անմիջական նախորդ էր Օմար Խալիֆի և իր տարօրինակութիւնների հետ միասին ազդեցիկ անձնաւորութեան համբաւ ունէր ժամանակակիցների աչքում:

Սյս տուեալներն առանձնապէս չեն հակասում Ռէզազուլի խանի Թէհրանում, հէջրի 1295 թ. հրատարակած *مجمع التواريخ* (,ժողովածու ճարտասանների) զբոլում յայտնած տեղեկութիւններին, որոնց համաձայն թահէրը վախճանուել է հէջրի 410 թ. (1019.20 թ.), այսինքն Անսարիից, Ֆէրդուսիից և այլ ժամանակակիցներից առաջ:

Միւս կողմից Միրզա Մէհդի խան Քոլբարը *مجمع آسيائي* (,Քէնդալի Ասիական ժողովածու) թեր-

թում (1904 թ.) մեծ որամտութեամբ քննութեան է ենթարկել Բաբա Թահէրի մի քառեակը (№ 3), որի բնագիրը հետեւեալն է:

من آن بحر که در ظرف آمدمت من آن نقطه که در حرف آمدمت  
بهر آلفی آلف قدی برآید آلف قدم که در آلف آمدمت

Քննադատը նկատել է, որ Թումա-կան նշանակութիւնը (ինչպէս և «طاهر»-ինը) =  $215 [1 = 1, 3 = 30, 8 = 80, 10 = 100, 4 = 4] - 1 + 30 + 80 + 100 + 4 = 215$ : Բաբա Թահէրն ասում է, որ Թումա-կան է, որ Թումա-կան է (երևան) եկել. ուրեմն պէտք է Թումա-կան: Իսկ վերջինիս տառերի թւական նշանակութիւնն է  $111 [1 + 30 + 80]$ . այսպիսով ստացւում է Թահէրի ծննդեան թւականը՝ հէջրի 326 թ., և ուրեմն Թահէրը 410 թ.ին, վախճանուելիս, 84 տարեկան էր, որ միանգամայն համապատասխանում է աւանդութեան:

Բաբա Թահէրի զերեզմանը.— Բաբա Թահէրի զերեզմանը մի հասարակ դամբարան է և գտնուում է Համադանում, քաղաքի արևմտեան կողմում Բոնէ քաղաքի կոչուած թաղում մի բլրակի վրայ, որ մօտ 5 մետր բարձրութիւն ունի՝ հարէս էքնէ Ալի էմամզադէի զիմացը: Բլրակի տեսքը վերին աստիճանի գեղատեսիլ է. այստեղից չքիղ տեսարան է բացւում ղէպի զիմացը բարձրացող Ավանդի գագաթը, շուրջը փռուած են

357-5

հացահատիկների լայնածաւալ արտեր: Գերեզմանի դիմաց գտնուում է մի շինութիւն, որտեղ ապրում են գլխավորապէս դարձիւնները, չորս կողմ տարածելով օպիումի և կանեփի նարկոտիկների ծուխը:

Գերեզմանի կողքին գտնուում է Թահէրի դայիակի, իսկ ըստ ուսանող՝ սիրուհու, Փաթմէի և արէֆ շաջ միրզա Ալի Նադրի խան Քոլսարի շիրիմները: Բարա Թահէրի գերեզմանը ուստատեղի է հաւատացեալների համար, որոնք յատկապէս ուրբաթ օրերը այդտեղ են հաւաքուում շրջակայքից:

*Բարբառային պօէզիան Պարսկաստանում—*

Մի կողմ թողած աֆղաներէնը, բալուչերէնը, քըրդերէնը, օսերէնը և Պամիրի բարբառները, որոնք իրանական արդի բարբառներ են պարսկաստանի սահմաններից դուրս, բուն երկրում մենք գտնում ենք բարբառների հետեւալ երկու խոշոր խմբակցութիւնները—*Կասպիական բարբառներ* [Թաթերի լեզուն, Թալիշի, Գիլանի, Մաղանդրանի և Սեմանի բարբառները] և *Կենտրոնական բարբառներ* (Բաշանի, Նաթանգի, Նայի-նի, Բախտիարի, գարբերի և այլ բարբառները): Ինչպէս յայտնի է, Ֆէրդոսիից դեռ առաջ սկսեց դարգանալ, բայց գլխավորապէս նրա ջանքերով մշակուեց պարսկերէն գրական լեզուն, որ մինչև մեր օրերը գոյութիւն ունի, լինելով, երբեմն ամենածաղկած, ներկայումս էլ

ամենագեղեցիկ լեզուներից մէկը աշխարհում: Ահա այդ գրական լեզուի կողքին կանգնած են եղիլ միշտ Իրանի բարբառները, միաւորուած [Աքեմենեան շրջանից ահա՛] երկու բարբառախմբերի մէջ՝ *Հիւսիսային* և *Հարավային*, որոնք արդիւնք են եղիլ հնագոյն մարազան և ֆարսի խմբակցութիւնների զարգացման:

Այս բարբառներից ուսանք, սկսած 11-րդ դարից, Ժրբեմն փորձեր են արել, ինչպէս աւելի խոշոր չափերով մեղնում, գրականական տալարեղում երեւալ: Բանաստեղծների մէջ, որոնք փորձել են բարբառով գրել քերէնց քերթուածները, կարելի է յիշել այնպիսի անուններ, ինչպէս են Սա'դի, Հաֆէզ, Bushaq [նշանաւոր փորտկագէտ բանաստեղծ]: Սակայն սրանց այդ ուղղութեամբ գրած բանաստեղծութիւնները մեծ մասամբ հղծուած են և հրապարակի վրայ մնացող մեծագոյն բարբառային բանաստեղծը համարուում է Բարա Թահէրը, պարսկական այդ Բէօրնսը, ինչպէս նրան որակում է Էգուարդ Բրաունը: Բարբառը, որով գրուած են Թահէրի բանաստեղծութիւնները, զանազան անուններով է յայտնի—*Համադանի*, լորի, փահլաւի, քադի այսինքն Ռէյի և լիովին չէ համապատասխանում ներկայ բարբառներից և ոչ մէկին: Նա նման է մի կողմից գրական լեզուին, միւս կողմից առնչութիւն ունի լորի բարբառի և քրդերէնի հետ, նոյն իսկ տարրեր ունի

21528

3971



(dirom փոխ. dâram) Քաղերունի բարբառից, որ ընկնում է Չիրազի չըրջանում և այդպիսով ըստ հագնանքի, որ հարցի նորագոյն ուսումնասիրողն է, խառնուրդ է ներկայացնում: Իսկ ինչ վերաբերում է հիւարի այս բարբառը „pehlévi musulman“ անուանելուն, սա մի վերացական յորջորջումն է, որ հետագայում կիրառում չունեցաւ: Այն հանգամանքը, որ մի կողմից մաղանդրանցիները համարում են Թահէթին իրենց բանաստեղծ] և առհասարակ պարսկաստանի [Մափաւաշիքի ցեղերը նրան իրենցն են համարում, ցոյց է տալիս միայն բանաստեղծի բնական ժողովրդականութիւնը:

ԲաՅա Թահէրի դիւանը 2) — Բարա Թահերը գրեւ  
է գլխաւորապէս ուրա'րիներ (քառեակներ) և այսպիսով  
մէկն է Սեյճուկեան շրջանի չորս նշանաւոր քառեակագիր-  
ներէից, որոնց գլուխ կանգնած է հռչակաւոր Օմար Խայ-  
եամը, երկրորդ տեղը գրաւում է Բարա Թահէրը, ապա  
գալիս են Աբու Սա'իդ բէն Աբուխայր (նշանաւոր սուֆի)  
և Չէյխ-օլ-Անսարի կամ Փիլէ-Անսար:

Ռորա՛րն կամ քառեակը, որ մի ամբողջացած քերթուած է և մեր գրականութեան մէջ էլ գործածական է, ներկայումս բաղկացած է չորս տողից, որոնցից

1) Die Kaspischen Dialekte, von W. Geiger's Grundriss der Iranischen Philologie, 2. Aufl. I, 2. Aufl. p., S. 346.

1) Երկերի լիակատար ժողովածու, որտեղ ոտանաւորները դասաւորւած են յանգիւրի վերջին տառերի այբբենական կտրգով:

յանդաւորում են ա., բ. և գ. սողերը, իսկ գ-ը ազատ  
է մնում (քայց երբեմն սա ևս յանդաւորում է սիւններէ  
հետ )

Ինչպէս յայտնի է, յունահռոմէական քերթումածնե-  
րը յանգեւր չունէին, նրանք մտել են հւրոսլական գրա-  
կանութեան մէջ արաբականի ազդեցութեան տակ և  
ներկայացնում են այս կամ այն հնչիւնաշարքերի ռիթ-  
մական կրկնութիւնը, որ առաջ է բերում ընթերցողի  
կամ յստղի մէջ էսթետիկական որոշ զգացումներ:

Ռուբա'իլի երեսյութի հոգեբանական հիմքը հետևեալն է.— ա. և բ. սողերի յանգաւորումից առաջ է գալիս հըշխնաշարքերի նմանութեան, սովորաբար նաև նոյնութեան գիտակցութիւնը և համապատասխան էտիկե-տիկական ապրումը. և որովհետև յանգաւորուող սողերն իրար կողքի են, տպաւորութիւնն առանձնապէս զգալի է լինում, ուստի կարծիք է զգացւում հանգստի, որ իր հետ բերում է գ. աղատ սողը, բայց տպաւորութիւնը չը ցրելու համար անհրաժեշտ է դառնում դ. տողով վեր-ջնականապէս ամբալնդիլ և ամբողջացնել ռիթմական նոյնութեան տպաւորութիւնը:

Յանդատուումը լինում է պարզ, ինչպէս սովորական  
բանաստեղծութեան մէջ և բարդ կամ կրկնակի, որպէ-  
սի դէպքում կրկնում է մի խօսք կամ ամբողջ արտա-  
յայտութիւն, ընդ առաջ նոյնպէս բառերը նմանադասակէս:

Ռորա'ին սովորաբար կառուցուած է «Հազաջ» չափով, որ ունի հետեւեալ սքեման. — — — | — — — | — — —

Բարա Թահէրը որպէս բանաստեղծ մրցակից ախոյեան է Օմար Խալիամի, Ջալալէդդին Ռումիի, Սա'դիի և Հաֆէզի նման գրական հսկաների. նա պարսիկ մեծ բանաստեղծներից մէկն է, որ խոշոր ժողովրդականութիւն է վայելում իր հայրենիքում շնորհիւ իւր հմայիչ պարզութեան, զգացմունքների թարմութեան և անմիջականութեան, վառ պատկերների և սահուն տողերի, որոնք վերցրած չորս-չորս կտգմում են նրա մելոդիկ և ներշնչանակ ոտքա'նները, գործադրելով դրա համար մի չափ, որ Հազաջի հասածոյ ձևն է (Hazaj-i-musaddas-i-mahzuf) և տարբերում է սովորական Հազաջից նրանով, որ վերջին ոտում զեղջուտ է չորս վանկերից վերջինը և ստացւում է հետեւեալ սքեման.

— — — | — — — | — — — 1

Մինչև 1927 թ. Բարա Թահէրի քառերկնորից ընթերցող հասարակութեան յայտնի էր մօտ 60 հատ: Այդ թւին գնուեց և հրատարակուեց Թէհրանում գրահանադէտ Վահիդ Դաստգերդու ձեռքով Թահէրի լրիւ

1) Մեր թարգմանութիւնների մէջ ոտերը շատ դժգոհութեամբ ստորութեւն են հետեւեալ կարգով. — | — — — | — | — —, որ ունենալով վանկերը նոյն թիւը, նախընտրելի է մեզ համար սրպէս մի ձև, որ անելի հառադատ է մեզ և շատ դժգոհութեամբ համապատասխանում է մեր միջնադարեան բանաստեղծութեան:

գիւանը, որ մի խոշոր նորութիւն էր պարսիական և արեւելադիտական գրական շրջաններում: Այդ գիւանը պարունակում է 296 քառերկու, Դիւանում գետեղուած 45 նաեւ այլ գրքերից վերցրած և Թահէրին վերագրած, ըստ կասկածելի 59 քառերկու:

Թահերի գիւանում գտնուած ենք նաեւ չորս ղազալ<sup>1)</sup> որոնք ընդհանուր առմամբ նոյն մօտիւններն ու ուղղութիւնն ունեն, ինչ որ բանաստեղծի սիրային քառերկուները:

Հազալի, ինչպէս և նրա աղագից դասիդէի [قصيده] կառուցուածքի հետ ծանօթանալու համար պէտք է հարեանքի գաղափար ունենալ արաբական տաղաչափութեան մասին (թէպէտ է հազալը պարսկական ստեղծագործութիւն է. ինչպէս և քառերկու):

1) Հազալ (حزج) արաբերէն քառէ և բանաստեղծութեան որոշ տեսակն է, որ ունի յատուկ ձև (տ. ստորեւ թարգմանուած դազալները) և նուիրուած է սիրային ապրումների կամ միտալքական բովանդակութիւն ունի: Հազալ բառը մեզնում գործ է ածուած գաղէլ ձևով, որ փոխառութիւն է արաբերէնից, որ իւր հերթիւն աղագիցում է, շնորհիւ առանձնապատուկ տառադարձութեան, նոյն աղագիցում ձևը՝ «գաղէլ» արաբերէնում նշանակում է դազալներ սրբագրուած ձևը՝ «գաղէլ» արաբերէնում նշանակում է դազալներ, այսինքն դազալներ յօրինող բանաստեղծ և ուրեմն թիւրիմագու, յաւանքից խուսափելու համար և նկատել ունենալով որ եւրոպական լեզուներով էլ այս բառը վերոյիշեալ իմաստով գործածական է ghazal ձևով, «գաղէլ» գրութիւնը անհանդուրժելի պէտք է համարուի և վտարուի մեր լեզուից:

Արաբական տաղաչափութեան մէջ նոյն սկզբունքներէ կիրառուում, ինչ որ նոմադ-արաբներէ վրան կառուցելու արուեստում:

Ինչպէս վրանը շինուածք, տուն է (بيت-բէյտ), այն-պէս և երկու տողից յօրինուած բանաստեղծական հատուածը ըէյա կամ տուն է (հմ. միւր տաղաչափութեան մէջ ևս մուտք գործած նոյն տերմինը): Վրանի կամ տան նշանակալից մասը նրա դուռնէ, որի երկու փեղկերը [مصرع-մէսրա] ամբողջացնում են տան տալաութութիւնը. այսպէս են և տաղաչափութեան մէսրաները (բանաստեղծական տողերը), որոնցից կազմուում է տունը կամ բէյաը:

Ղաղալի մէջ առաջին բէյաի մէսրաները միշտ նմանայանգ են և կազմուում են ղաղալի մաթլա'ը (مطلع-մա-դլում), որ այգպիսով ունի ներքին յանգ: Հետեւեալ տներէի [բէյաիի] մէջ առաջին մէսրան ազատ է, իսկ երկրորդը միշտ յանգաւորուած է մաթլա'ի երկու մէսրաների հետ:

Այսպիսով ամբողջ ղաղալը, որ պարունակում է սո-վորաբար 10-12 բէյա, ունի մի միակ յանգ, որ սկըսում է մաթլա'ի երկու մէսրաներում և ղարբերաբար կրկնուում հետեւեալ բոլոր բէյաիի երկրորդ մէսրանե-րում:

Տաղաչափական նոյն կառուցուածքը մենք գտնում

Վնք և Ղ'ասիդէի մէջ, որ բանաստեղծութեան մի այլ տեսակն է, մեծ մասամբ ջատագովական, որ կարող է ունենալ նոյն իսկ աւելի քան 100 բէյա:

Ղաղալի և ղասիդէի տարբերութիւնը բացի բովանդակութիւնից և բէյաիի քանակից կայանում է և նրանում, որ բանաստեղծը ղաղալի վերջին բէյաում (մաղթա-معاذ, հատած<sup>1)</sup>) ղնում է իր թախալլուսը (تغص-տախահանուն<sup>1)</sup>), իսկ ղ'ասիդէում՝ ոչ:)

Ուշադիր ընթերցողը կարող է նկատել, որ քառ-եակն իր կառուցուածքով այլ բան չէ, եթէ ոչ ղաղալի առաջին երկու բէյաը, ուստի կոչւում է ոչ միայն ու-քա'ի (,քառեակ', այսինքն չորս մէսրա՝ ունեցող) այլև ղօբէյաի (دوبيتى), այսինքն երկու բէյաից կազմ-ուած: Հին ժամանակներից Բաբա Թահէրին վերագրում է նե کلمات قصار (համառօտ խօսքեր) անունով մի գրուածք, որ մի միատրեական բնազանցական տրակտատ է արաբե-րէն լեզուով, բաղմիցս մեկնաբանուած (հնագոյն մեկ-նութիւնը վերագրում է Այն օլ 'Ազաթ- համադանիին) և բաւական տարածուած Պարսկաստանում: Տրակտատը բաժանուած է 23 գլխի և պարունակում է 363 համա-ռօտ խորհրդածութիւն գիտութեան, յայտնութեան խելքի, հոգու և այլ նման նիւթերի մասին: Այդ տրակ-տատը աւելի է մօտեցնում Բ. Թահէրին սուֆիստական

1) Տ. Թահէրի չորս ղաղալները:

դերվիչական ընկերութիւններին, որոնք ըստ Գոբինոյի նրան յարգում և պաշտում են\*)

Բաբա Թահէրի քննարը.—

Թահէրի հոգեկան աշխարհը բռնկուած է ցնցող յոյզերով, որոնք երբեմն նրա սրտից սիրոյ գեղգեղանք են կաթեցնում, երբեմն սիրոյ տառապանքի ծովն են նետում նրան, երբեմն կանգնեցնում են պօէտին յուսահատութեան գառազիղի առաջ, ուր նա հնչեցնում է ոչնչութեան անյոյս հեղեղները, իսկ երբեմն ճախրեցնում են համադանի բազէի հզօր թևերը դէպի վերին ոլորտները. ուտեղ նա իր մրցակիցը շունի և որսողից նա դատի է կանչում արեգակի անուն՝ մարդկութեան մէջ արեգակ անարդարութիւններին համար:

Թահէրի պօէզիայի հնոցն, ի հարկէ, սիրոյ առարկան է և սէրը, որ նա երգում է ոչ միայն կատարեալ արեքեցութեամբ, այլ և ողբադին, լալահառաչ շեշտով. զուր չէ, որ Թահէրի անգլիացի հրատարակիչը—Հեբոն-Սիլեն-գիրքը վերնագրել է The Lament of Baba Tahir («Բաբա Թահէրի ողբը») (իսկ գերմանացի Թարգմանիչը Հեյնրիխսկի՝ Die Gottestränen des Herzens, «Սրտի տոտուածային արցունքները»): Թահէրի պօէզիան համակուած է խորին վշտով և մեծապէս պիսիթ

միաստան շունչ ունի: Նրա սիրուհու ամեն մաղից մի սիրտ է կախուած. Թշի խալը սև է, որովհետև մօտ է արեգակին՝ նրա դէմքին: Նրա նկարից վարդի հոտ է բուրում. երնէկ նրանց, որոնք նրա սիրուհուն են տեսնում. և եթէ ինքն անկարող է տեսնել իր սիրուհուն, գոնէ նրանց տեսնի. որոնք նրան տեսնում են: Սյդ իհարկէ, Թահէրի հոգեկան կառուցուածքն է իր յոյզերով, որ բանաստեղծի երկչոտ քայլերը մենութեան անդունդից ուղղում է դէպի սիրուհու շեմքը: Եւ բնական է, որ ամենազօր գեղեցկուհին անդառնալիօրէն արեւակտեղ է բանաստեղծի սրտին. նա դադ է կանչում այդ անհնազանդ սրտից, որ նա «միշտ վայրի թռչնի պէտէ հատիկ դեռ չը կերած՝ ընկած է ցանդում»: Նրա սիրտը Թաց ճիւղտի է նման՝ «մի ծայրն այրում, մի սիւց արևն կը կաթի»: Պոէտի սիրտն անազորոյն է, նման է տալանի կամ փալանգի և բանաստեղծը սպառնում է նրա արևնը Թափել, եթէ նա նրա ձեռքն ընկնի. . . Սյդ սիրտը նրան Մաջնուն է դարձրել, իսկ Լէյլին՝ սիրուհին է: Եւ բանաստեղծն առանց իր, «դէլբարի» մի հեռաւոր անկիւնում նստած մէկ մէկ աստղերն է համարում և կէս գիշերից յետոյ, երբ սիրուհին դառնում է զալ նրա մօտ, արտասուքի հեղեղ է թափում աչքերից: Երբ նա առանց սիրուհու ճեմում է վարդաբանում, վարդաբանը փշանոց է դառնում նրա աչքին: Նա սիրոյ

\*) Gobineau, „Trois ans en Asie“.

առարկայի հանդէպ մուրացիկի դերում է. «չթուների  
անկիւնից տուր ինձ մի համբոյր, ասա՛ Աստուծո՛ւ սի-  
րուն տուր աղքատի»: Նրա սէրն այնքան քընքոյշ է և  
կաթոզին, որ նա ցանկանում է, որ սիրուհու ոտը կո-  
տորի նրա աչքամէջը, միայն վախենում է, որ չը լի-  
նի թէ թարթիչները փաշը ծակի նրա ոտը: Նա սի-  
րուհու հաճոյքի համար պատրաստ է Զինումաչինից էլ  
էն կողմը գնալ և պատգամ՝ ուղարկել սիրուհուն հիմ  
նա յօժար է, էլ հեռուն գնալ: Նրա դարդի դեղ ու  
դարմանը սիրուհու մօտն է և նա համոզուած է, որ  
հիմ է անգութ հարը մահից յետոյ անցնելու լինի նրա  
հոգի վրայով, նրա բոյրից կը կենդանանայ:

Բայց երբեմն նա ծառանում է սիրուհու վայրա-  
գութեան դէմ. «դու որ հար լինելու գլուխ չունիս ինձ,  
մըր ես կէս գիշերին քունս վրդովում»: Նա նոյն իսկ  
չատ հեռուն է գնում սպառնալիքի մէջ. «ես էլ գնամ  
մէկի փէշիցը բռնեմ, որ հանգիստս քեզ պէս չանի ցա-  
նուցիք»:

Բանաստեղծը եփուել է սիրոյ հնոցում. նա գիտէ-  
լինչ տուել է սիրահար. [Ով սիրահար է, ոչնչից վախ  
չունի. «սիրահարի սիրաը սոված մի գայլ է, հովուի  
հարայ ու չլուանից վախ չունի»: Սիրահարն ամեն տա-  
ռապանք պատրաստ է տանել\*] Եւ նա անվահերու-

1) Հառեակ 73.

թեամբ հրապարակէ նետում և սուղում է տառապան-  
քի ծովը:

Վշտի մէջ նա երևան է բերում քնքոյշ զգացմունք-  
ներ. կրօնական անհամբերաւարտութիւնը խորտակում  
է սիրոյ յաղթական գնացքի առաջ. «թէ չունի՛լ՝ ոտ  
դնի աչքիս, սիրուհիս, կսլա՛ծ հոգը թարթիչներով  
կառնեմ ցած»: Սիրուհին սակայն միշտ հեռու է նրա-  
նից. էլ խնչպէս չը տառապի պօէտը: «Բոլորդները  
վարդին նստած են հեծում, վարդից անջատուած եմ,  
լինչպէս չը հեծեմ»: Բանաստեղծի և նրա սիրոյ առար-  
կայի մէջ մութ դեր է կատարում մի ինչ որ երբորդ  
անձնաւորութիւն. «Աստուծո՛ւ գահոյքի մօտ երբ է ընդուն-  
ուած, վարդըն իմը, վարդաջուրն օտար տանի»: Եւ  
Թափէրը համակուած է անտահման վշտով. «Բաժան  
բաժան թէ անկն դարդը սրտիս, աշխարհումըս էլ ան-  
ցաւ մարդ չի մնայ»: Նա պէտք է տապալուի մինչև  
վերջին զատաստան: Նա ամբողջ կեանքում զուներն ըն-  
կած է: Եւ բանաստեղծի սիրաը փղծկում է. «Մերիկդ  
իմ, առանց քեզ անճար եմ ապրում, սրտումս փուշ,  
աատասկ է իմ աչերում: Զեռքերս, որ երբեմն վղիգ  
էր վարուած, այժմ ճանճի նման գլխիս եմ դարնում»:

Սիրահարի այս ողբերգութիւնը որքան և ընկճելու  
դառնացրել է բանաստեղծին, բայց նրան պարզեւել է

1) Շունը «նաջէս», պիղծ է. ըստ շաբլաթի.

մի վերին առաքինութիւն — յոսեփէս, բայց խոր իմաստութիւն երկրաւոր գործերի նկատմամբ: Եւ համադրելով մերկ փրկութեան լի իր արժանաւորութեան գիտակցութեամբ, տարբարութեամբ է աշխարհային գործերն ու եւեթները և պիտոյնական դատավճիռներ կարգում: Նրան զբաղեցնում են սոցիալական անհասարկութեան հարցերը, նա գիտում է արեւելքի անին և բացատրութիւն պահանջում — այդ ինչերն են արեւ. «մէկին հարկը տեսակ շնորհ են արել, միւսին մի գարահաց արնով շաղախում»: Նա ողբում է, յիշելով, որ «Շահելութիւնն էլ գարուն էր, նա գնաց»: Սերմնացանի բերնով նա բողբոջում է, որ պէտք է ցանել ու թողնել էս գաշտում: Նա արգահատանքով է խօսում այն մարդկանց մասին, որոնք չը գիտեն ինչ ասել է վիշաք. «քո սիրտը որ վշտից կրէք չի այրուել, էլուած սրտից խելքը ինչ բան կը դառնա»: Իսկ «այն անձը, որ անյողդողդ չէ սիրտ մէջ, կառու կառու հրումն այրել կը սողնա»: Բարա Թահէրը նոյնիսկ անագորոյն է գառնում. օր այն ծառի վերաբերմամբ, որ այգում դէպի գունն է թերեւած. «նրա տըմատը պիտ քանդել, աւերել, թէկուզ լա՛լ գոհարով ձգներն են ծածկուած»: Նա ծառանում է ֆալաքի<sup>1)</sup> դէմ (տ. քառակ 83):

Յոռետեսութիւնը ժայթքում է Թահէրի կիանքի

բոլոր ծալքերից. «ես մի ունեղ եմ...» (քառ. 7), և նա զգում է իր ամբողջ ոչնչութիւնը. այսպիսի ապրումները արդիւնքն են № 6, 7, 8 քառակները:

Բայց միւս կողմից կիանքի գառնութիւններն առատորէն վայելիլը բանաստեղծի մէջ կռիւ կոփել են աննկուն կամք և առաջացրել են գերազանցութեան և վահութեան գիտակցութիւն և նրա զրշի տակից դուրս են թափւում ոգեշունչ աղեր, որ յիշեալ գիտակցութիւնը չունենում է արտայայտուած. այդպէս են № 1, 2, 3 և 4 հայալապ քառակները:

Հակառական զգացումներ է արտայայտում Թահէրը մահուան նկատմամբ, մի կողմից երնէկ տալով այն օրին, երբ նա նեղ շիրիմ կը մանի և օձ ու մրջնակի հետ բաս կը մանի, միւս կողմից վայ տալով այն օրին, երբ նա ու ձեռք չի ունենալ այդ նեղ շիրիմում կուր անելու կամ փախչելու օձերից: (քառակ. 9 և 10):

Կրօնական ապրումները մենք շատ քիչ ենք հանդիպում Օրիանի պօէզիայի մէջ. այսպէս են № 98 և 99 քառակները. կրօնական ապրումները առգործում են լայն համբերատարութեամբ և № 100 քառակը այդպիսի ապրումների մի զգացուած արտայայտութիւն է:

Բարա Թահէրի քնարն, ինչպէս տեսանք, ունի ուժեղ պիտոյնական լարեր, որ հետեանք է սիրտ տառապանքի, այդ տառապանքը նրան հասցնում է սեպհական անձի

1) «Երկնք», այստեղից այլաբանօրէն՝ բազմ, հակառակը:

ոչնչութեան վիտակցութեան) և սակայն միևնոյն ժամանակնա զգում է, որ այդ անթրապի է. իր խառնու-  
ւածքով և զօրեղ թափով նա շատ աւելի լարձը ոլորա-  
ների է արժանի և նա վիտակցում է իր գերազանցութիւնը  
չըջապատի վերաբերմամբ: Թաճէրի այս զգացմունքներն  
ու գիտակցութիւնը իրար հակասելու չափ տարօրինա-  
կութեամբ միաւորուած են նրա ղազալներէ մէջ, ո-  
րոնք թուով չորս, բայցն էլ միևնոյն արամադրութիւնն  
ունեն՝ սիրային պետական, բայց բմբոստ, պոսթ-  
կումներով: Որոշ ամբողջացած բովանդակութիւն մենք  
չենք կարող սպասել այդ գաղափարից այնպէս, ինչպէ՛զ զուր  
կը փնտռենք այն պարսիկ գրականութեան այդ տեսակի  
թէկուզ ամենամեծ ներկայացուցչի՝ Նափէղի գաղափարի  
մէջ. գաղափարը արդիւնք է խառնիճադանճ աւիւնի...

Ահա Թաճէրի գաղափարի բովանդակութեան ընդ-  
հանուր սքեման: սիրունուս գաղափարը հս գաղ ունիւմ սըր-  
տումս և անյոյս տառապում հմ, առանց նրան աշխար-  
հումս ոչ մի բան ինձ համար արժէք չունի. բայց ևս  
յաւիտեան հաւատարիմ կը մնամ նրա յիշատակին: Ես  
քաջ եմ, բոցալաւ հուր եմ և ամեն ինչ կարող եմ այ-  
լիլ, բայց սիրունուս կարօտից թոշնած նուսուփար եմ  
և այս աշխարհում ամենից ապրիկար եմ:

Ի) Դրանք քիչ չէ նպատում Թաճէրի սոցիալական գիւրքը. նա  
աէնդ է, նա զալանդար է...

Բարա Թաճէրի գաղափարն արդիւնք են եւուն  
զգացմունքների, և բարձր ոգևորութեան և պարսկական  
զրականութեան մէջ առաջնակարգներից կարող են հա-  
մարուել:

### Սուֆիզմ

Թաճէրի պօէզիայի վերև արուած բնորոշումը միա-  
կողմանի կը լինէր, եթէ կարիք չը լինէր մասնացոյց  
անիլ մի կրեոյթ, որ իր գրոշմը գրել է այդ պօէզիայի  
վրա: Դա սուֆիզմն է, արեւելեան մի իւրատեսակ միա-  
տիբական ուսմունք: Յօդուածիս սահմանից դուրս է,  
ի հարկէ, առաջ սուֆիզմի մանրամասն վերլուծութիւնը:  
Այստեղ կը շօշափուին մի քանի հիմնական կէտեր  
միայն, որոնք անհրաժեշտ են մեզ հետաքրքրող երե-  
ւոյթի պարզաբանման համար:

Սուֆիզմը մի պանթէիստական միստիքական ուս-  
մունք է, որ ծնունդ է առել մահմեդական հողի վրայ  
չնորհիւ նէոպլատոնիզմի, քրիստոնէական տսկետիզմի  
և հնդկական վեդանտայի փիլիսոփայութեան միախառն-  
ման Փաքսիզմի և Մանիի ուսմունքի որոշ տարրերի հետ:  
Այս ուսմունքն սկսեց դարգանալ Մարգարէի մահից  
յետոյ և իւր ծագման շրջանն ունեցաւ սկսած հէջրի  
երեք ու կէս դարից, այնպէս որ 11-14 դարերի պարս-  
կական լայնածաւալ գրականութեան մէջ հաղիւ թէ  
լինի մէկը, որ խուսափած լինի սուֆիզմի ամենադուր

աղղեցութիւնից:

Ըստ սուփիստական պանթէիստական աշխարհայեացքի Թիեզերքը համարուում է Աստուածութեան էմանացիան կամ արտահանումը և Աստուածութիւնը յսրղում է ամբողջ Թիեզերքը: Նա կաղմում է մեր ձգտումների նպատակակէտը և հնարաւոր է միացում և ձուլում նրա հետ հետեւեալ ճանապարհներով:

1. Շարիաթ (شریعت), որ նախադուռն է սուփիզմի:

2. Միստիքական ուղի (طریقت), որով ընթացողները իրենց ունեցուածքից և սեպական կամքից հրաժարւելու գնով և որեւէ մորշէղի (հոգեւոր զեկավարի) մորշիդ (մտնթ և կոյր հեաւոյ) դառնալով ձգտում են դէպի կատարելութիւն:

3. Հոգեւոր գիտութիւն կամ մա'րէֆաթ (مراف), հոգեւոր առաջադիմութեան աւելի բարձր աստիճան, որին հասնողները «արէֆ» (عارف) են և կարող են մորշէդ դառնալ:

4. Ճշմարտութիւն (حقیقت), որպիսի աստիճանին հասնողները միանում են ճշմարտութեան կամ Աստուածութեան հետ և կարող են մորշէղիների իմամը լինել:

Դէպի Աստուածութիւն աանող ուղիով քայլողները յաճախակի ենթակայ են էքստազի, որ պօէզիայի մէջ իր արտայայտութիւնը գանում է արբեցութեան և հրաբորբոք սիրոյ ձեով դէպի սիրուհին:

Վերոյիշեալ դարերի պարսկական գրականութիւնը սրղումած է այդ սուփիական տրամադրութիւններով, որոնք բանաստեղծների մէջ առաջ են բերում բուռն աւելն-էքստազ և ի վերջոյ ներվանայի կամ Փաննայի (پان) վիճակ, որոնց շնորհիւ նրանց գրչի տակից զեղում են շնաշխարհիկ սողեր, որոնք յափշտակում, գերում են ընթերցողին:

Բարա Թահէրը ինքը մորշէդ էր—դաւանդար դարվիշների առաջնորդ, այս է ցոյց տալիս նրա մականունը՝ «Բարա». նրա գրչին պատկանում է վերը յիշած արարերէն միստիքական տրակտատը, նրա պօէզիան բոցալառում է սուփիական հրով: Սակայն այդ ուսմունքի կապանքները չեն կաշկանդել նրա երեւակայութեան թռիչքը և նրա սիրոյ զգացմունքները անմիջական են և վճիռ:

Այնուամենայնիւ Բարա Թահէրն ունի դուռ սուփիական ապրումներ. նա իր դժբախտութեան դարմանը գտնում է անէութեան կամ ֆանայի մէջ (քառեակ 94). սիրում է ընդգծել իր սոցիալական ամենաստոր աստիճանի վրայ կանգնած լինելը և իր ոչնչութիւնը, ունի մեղանշելու և մեղքերը քաւելու տրամադրութիւն, վերջապէս վիշտն ու դառնութիւնը նրա անբաժան ընկերներն են<sup>1)</sup>, բայց նրա հուժկու հոգին յաճախ լուծում է կապանքները և չամաղանի բաղէն իր հզօր

<sup>1)</sup> Եւ, մանաւանդ քառ. № 90.

թիւերը պարզած սաւառնում է սարէ սար, որտեղ նա իրեն զգում է ամենազօր արքայի վիճակում:

Բարա Թահէր եւ Օմար Խայեամ՝.

Երբ ցանկութիւն է առաջ գալիս Թահէրին համեմատելու այլ պարսիկ բանաստեղծներին հետ, առաջինն անձը, որ ակամայից համեմատութեան հօրնդոնն է ելնում, Օմար Խայեամն է: Երկուսն էլ քնարեգու, քառեակագիր, երկուսն էլ մեկուսի զիրք ունեն պարսից գրականութեան մէջ, երկուսն էլ փրկութեամբ անհրաժեշտութեան մէջ, երկուսն էլ փրկութեամբ անհրաժեշտութեան մէջ, երկուսն էլ փրկութեամբ անհրաժեշտութեան մէջ: Սակայն նրանց մէջ կայ և խոր տարբերութիւն:

Խայեամը օրինակիւ բանաստեղծ է, իսկ Թահէրը — սուրբիկալիւ. Խայեամը մեկնում է կեանքի անարդար երևոյթներէ, յատկապէս նրա կարճատևութիւնից ու անբովանդակութիւնից և մահուան արտառովոր փառաբանից և բարձրանալով մինչև ստեղծողի գահոյքը, նրա երեսին կարգում է անարգարութեան ծանր մեղադրանքը. կէտը (քուզէները) մի կողմից, աղանիները միւս կողմից ազդակում են աշխարհի ունայնութեան մասին և նիշարուրի փրկութեան բարձրաձայն յայտարարում է, որ դեռ է պանայէան, ամենարոյժ գարմանը, Carpe diem! խմբի զինի, խմբի անվերջ. . . Նա ոռոշինը և

1) Բառացի «բաղբ օրը», այսինքն օգտիւր մոմենտից. արտայայտութիւն հորացիոսի:

վերջինն է բոլոր հաճոյքներից: Եւ սկսում են Օմար Խայեամի հոշակաւոր զիթ իրամբները գլխուն: Սյուտեղից նա բնականաբար անցնում է երգի, սիրոյ առարկայի և ռէնդութեան (սրբիկայութեան) փառաբանութեան և այդպիսով բոլորում է իր կենցաղական անզուգական օրիգինալ փրկութեամբիւնը:

Այլ կէտից է մէկնում Բարա Թահէրը. նրան հրգեհոյ բոցերի հնոցը սիրած էակն է և հրգեհոյ՝ նրա զգացմունքները: Նա իր ամբողջ բանաստեղծական թափն ուղղում է դէպի իր սիրուհին. Թահէրը մերթ իմրա գեղն է երգում և զօլքն անում նազանքով, մերթ իմրա անսահման անձնութեան է երկան հանում, մերթ արտայայտում է իր անյատակ տառապանքները, ապա առաջ գնալով հասնում է օրինակիւ մոմենտին՝ կեանքի ունայնութեան, անհաւասարութեան, և այդ բոլորից յետոյ գտնում է դարմանը՝ սիրած էակի հրապոյրը. . . Սկսւում է սիրային perpetuum mobile, որ և ծնունդ է առնում Թահէրի յուսահատ պետութեան, որ համակում է նրա ամբողջ էութիւնը և ամբողջ պոէզիան:

Թահէրի սահմանափակ թուով քառեակները [№№ 1-4] որտեղ նա յանգում է սուրբիկալի օպտիմիզմի, առանձին տեղ են գրաւում նրա պոէզիայի մէջ, սակայն հետեանք են այն գլխաւորութեան, որ նա ձեռքբերով առաւելանքի ծովը, յաղթող է դուրս եկել կեանքում և

այդ տեսակէտից նրանք ազգակից են 77-րդ և 78-րդ քառեակներին:

Եթէ Թահէլը և խայկամը նկարիչներ լինէին, անշուշտ մենք առաջինից կունենայինք էքսպրեսսիոնիստական, իսկ երկրորդից իմպրեսսիոնիստական շքեղ նկարներ:

*Մատենագիտական.*— Թահէլի բերթումների ձեռագրերը (Asiat. Soc. Bengal, pers. № 923, պոստական պետական մատենադարան, Պիշի ձեռագրացուցակ № 697, Bibl. Nation. de Paris, Blochet-ի ձեռագրացուցակ II, 290) պոստական յատուկ և մասնաւոր հրատարակութիւնները (Աթֆալի Բէգ, Սթիւքիւղէ, Բոմբէյ 1277 թ., Ալի Էրրահիմ շահ, Սոհուֆ է Էրրահիմ, 1305 թ. (1791), Ռէզազուլի խան, Մաշմա-օլ-Փոսահա, Թէհրան, 1303, Բոմբէյի կրկին հրատարակութիւնները 1297 և 1308 Օմար խայկամի քառեակներին կից և նոյնը, Թէհրան, 1274 և Անսարիի հիմների հետ՝ Բոմբէյ 1301 թ.), ինչպէս և եւրոպական հրատարակութիւնները [Huart, Les quatrains de B. Tahir Urian, 1885, Heron Allen, The Lament of Baba Tahir, London 1902, Mirza Mahdi khan (Kankab), The quatrains of Baba Tahir, FAS 1904 № 1—Huart Nouveaux quatrains de Baba Tahir, Բոմբէյ 1908] թերի և պակասաւոր են:

Հրատարակութիւններից արժէքաւորները, ի հալ-

կէ, եւրոպականներն են, մասնաւոր հերոն Ալլէնինը, որ բովանդակում է 62 քառեակ (որոնցից 4-ը անհարադատ), հրատարակութիւնը կատարում է խնամքով, քառեակներին կցւած են ծանօթութիւններ, նրանց բոլորի արձակ թարգմանութիւնը տուել է ինքը հրատարակիչը, իսկ Mrs Elizabeth Curtis Brenton վերածել է ոտանաւորի. նախապէս թարգմանութեան համար մենք ձեռքի տակ ունեցել ենք այդ հրատարակութիւնը, բայց ինչպէս վերը յիշուց, 1926 թ. «Արմադան» ամսագրի խմբագիր Սյայէ Վահիդի ձեռքով գտնուց և հրատարակուց Թէհրանում Բաբա Թահէլի ամբողջական զիւանը (ديوان تاجيك) վստահիլի ուղղադրութեամբ, որից օգտուել ենք մենք մեր նախորդ թարգմանութիւնները համեմատելով և սրբադրելով և լրացնելով նոր քառեակներով ու դադարներով:

Ուսումնասիրութիւններից պէտք է յիշել Լացի Հիւարի, Հերոն Ալլէնի և Մահլի խանի համապատասխան յօդուածներից Жуковский, Кое что о Баба Тахирѣ Голышѣ, (Записки Вост. отд. русск. археол. ова 1901), Ed. Browne, A. Literary History of Persia 183-87, II 259-261), G. L. Leszchynski, Die Robaiat des Baba Tahir Urian oder die Gottestränen des Herzens, München, 1920, Hadank, Die Mundarten v. Khunsar Leipzig 1926. — Minorsky, Baba Tahir, յօդուած Encyclopédie de

Islam-ում, գրքոյի k, Լէյդէն-Փարիս 1929, էջ 641.—  
 Խինորսկի ارمان شرح حال باطاهر عارف وشاعر ایرانی  
 հանդիսութ, 1307 թ. دی ماه 10, էջ 573-588, Թէհրան:

Թարգմանութիւններէյ յիշենք Հիւարի, Հելոն  
 Ելլէնի և Լեշշինսկու թարգմանութիւնները (վերջինս 80  
 քառեակ և մի դադալ] այլ և 16 քառեակի հայերէն  
 թարգմանութիւնը, կատարած Յովսէփ Միրզայեանի  
 ձեռքով Օ. Խայեամի քառեակներին կից (Յմար Խայեամ,  
 Բաբա Թահէր և զանազան, Թէհրան 1923):

Սկզբում մենք մտադիր էինք հրատարակել Բաբա-  
 Թահէրի քերթումներին բնագիրը արձակ և չափածոյ  
 թարգմանութեամբ և երկերի ու բարբառի ուսումնասի-  
 րութեամբ, բայց որոշ հանգամանքներ ստիպեցին սահ-  
 մանափակուել աշխատութեանս ներկայ ձևով և առա-  
 ջարկել այն ընթերցողներին աւելի լայն շրջանի ուշա-  
 դրութեան. Փոխանակ թարգմանելու ամբողջ 296 քա-  
 ռեակները, մենք բաւականացանք ընդամենը հարիւր  
 ընորոշ քառեակներով, կցելով նրանց բանաստեղծի բո-  
 լոր շորս դադալները: Եյսպիսով մեր թարգմանութիւնը  
 ամենալրին է հղածներին մէջ և պէտք է յուսալ, որ նա  
 ընթերցողին որոշ դադափար կը տայ մեծ պիսոնիստ  
 բանաստեղծի գրական գործունէութեան մասին:

Յօդուածին վերջում պարտք եմ համարում սրտա-  
 գին շնորհակալութիւն յայտնել ارمان հանդէսի խմբա-

գիր և Բաբա Թահէրի լիակատար գիւանի հրատարակիչ  
 յարգելի Վահիդ Դաստգերգիին իր համակրական վերա-  
 բերմունքի համար դէպի իմ աշխատութիւնը և այն  
 բարեկամներս, որոնք իրենց քաջալերական խօսքով  
 զօրավիգն եղան ինձ լոյս աշխարհ հանելու սոյն գործը:

Պարսկերէն բառերի ուղղագրութիւնը. —

Մեր աշխատութեան մէջ, որտեղ գործ են ածուած  
 թէկուզ սովորաւթիւ պարսկական բառեր, անհրաժեշտ  
 ենք համարում մասնացոյց անել այն սկզբունքները,  
 որոնցով ղեկավարուել ենք այդ բառերի ուղղագրութեան  
 ժամանկ:

Ընդհանրապէս օտարազգի և մասնաւորապէս պարս-  
 կերէն բառերի ուղղագրութիւնը մեր լեզուում մի ծան-  
 րակշիւ խնդիր է, որին այստեղ մենք կարող ենք մօ-  
 տենալ միայն հարեանցօրէն: Պէտք է նկատել, որ պար-  
 սիկ տարրը մեր աշխարհից վտարուել է շնորհիւ այն  
 հանգամանքի, որ մեր և նրա մէջ որպէս անջրպետ  
 մուտք են գործել թուրքերը 13-րդ դարից սկսած: Եւ  
 այս վերջին եօթ դարերի հրկարատե ժամանակաշրջա-  
 նում պարսկերէնի ազդեցութիւնը մեր լեզուի վրայ  
 կատարուել է թուրքերէնի միջոցով, որ իւր հերթին մե-  
 ծապէս օգտուել է պարսկերէնի հարուստ շահմարանից:  
 Սակայն պարսկերէնի տառադարձութիւնը թուրքերէնում  
 առաջացնում է սպիցիֆիկ երեւոյթներ, որոնք պարսկի

յսոցութեան համար զուրկ չեն ծաղրական հանդամանքից։ Այսպէս պարսկական «թուրք» զառնում է «բիւրիւ», «գըլ» — «գիւլ», «մուր» — «միւր», «հոսէյն» «հիւսէյն» և այլն։ Բառերի այդօրինակ այլանդակուած ձևերն անցել են և մեր լեզուին և մենք կանգնած ենք մի պահանջի առաջ — վերականգնել պարսկական հարադատ տրտասանութիւնը։ Բացի յիշեալ երեոյթից յաճախ կարիք է լինում գործ ունենալ և հնչիւնի հետ, որ թուրքերէնում վերածուել է i-ի։ Այսպիսով ի բաց առեալ մի քանի դէպքեր, երբ բառի անկանոն արտասանութիւնը արդէն ընդհանուր գործածութեան է աբժանացել մեր [ժողովրդական] լեզուում, ինչպէս օր․ շուշայ, միլլէթ, ջուլսա [փոխ. շիշայ, մէլլաթ, ջոֆա] են, որ մենք նոյնութեամբ ենք պահել, ընդհանրապէս մենք զրում ենք «խարվար» (և ոչ «խալվար»), «բոլբոլ» (և ոչ «բիւրբիւլ») «սոմբոլ», բայց և «ամբուլ», «ֆոլան» (և ոչ «ֆլան»), «վիրան» (և ոչ «վէրան»), «բաղբան» (և ոչ «բաղման»), «մարհամ» (և ոչ «մհլամ» և այլ ձևեր), «նազոք» (և ոչ «նազուք»), «դէլբաբ» և ոչ «դիլբար»), «նովբար» և ոչ «նոքար») են։

Գրութեան ներկայ վիճակում սակայն անլուծելի է մնում Սմաւտ-նիւրի, այսինքն «քաղցրացած» (պալատալիզացիայի ենթարկուած) ձայնաւորները պարզեմբ, քանի որ մեր այբուբենը նշաններ չունի արտայայտելու

այդ ձայնաւորները, որ հնչարանական տեսակէտից մեծ զրկանք պէտք է համարուի մեր լեզուի համար։



II ԹԱՌԵԱԿՆԵՐ

رباعیات



### ԿՈԶՈՒՄԻ ԵՒ ԳԱԼԻԲԻ ԽՈՂԵՐ

1. Ես էն սխալտակ բազէն եմ Համադանի,  
Որ բոյներս թաղւած է մէջ լեռնաւտանի.  
Թեաւտարած սաւառնում եմ սարէ սար,  
Չանկերըս յօշոտում երսը ետբանի<sup>1)</sup>:
2. Ես արքայ եմ. լեռան կատարն է վայրըս,  
Սէյրիս<sup>2)</sup> տեղն է ամբողջ արար աշխարհըս.  
Ոչ տուն ունեմ, ոչ մուն և ոչ հանգրուան,  
Խահուան ժամին սաւանս է թե ու փառքս:
3. Ես ծովեմ մի սրուակի մէջ ամփոփուած,  
Ես կէտ եմ՝ տառերն ինձնից ձեւորուած.  
Հազար տարին մի հանճար հանդէս կըգայ,  
Ես հանճար եմ հազար տարում յայտնուած:

---

1) Անաղատի 2) զբօսանքիս


4. Ես էն հրաթե թռչունն եմ, որ կարող եմ  
Աշխարհն ամբողջ այրել, թէ թեահարեմ,  
Թէ նկարիչը պատին ինձ նրկարէ,  
Նրկարիս զօրութեամբ էն տունը կայրեմ:
5. Ախով լազուր երկնակամարը կայրեմ,  
Երկինքն ամբողջ ծայրից մինչ ծայրը կայրեմ,  
Կայրեմ, թէ գործըս չը սարքես, Տէր իմ, Տէր,  
Աստ, սարքում ես, թէ բոլորը այրեմ:
6. Ես մի փշով սնուող ուղտի տիպարեմ,  
Կերըս տատառակ, մի լսարւար<sup>1)</sup> բեռնատար եմ,  
Ու էս ծանրը բեռից ու չնչին ծախսից  
Տիրոջս առաջ էլ միշտ ամօթահար եմ:

1) բառացի՝ մի իշարեռ = 100 լիտր (18փ. 30ֆ.)

7. Ես մի ունդ<sup>1)</sup> եմ, իմ անունն է դաւանդար<sup>2)</sup>,  
Ոչ տուն ունեմ, ոչ մուն ունեմ, ոչ լանդար<sup>3)</sup>.  
Յերեկն եկաւ՝ շրջում եմ աշխարհ բոլոր,  
Գիշերը լուսացնում՝ զլիսիս տակ մի քար:
8. Ես էն անբաղդ անձն եմ անտէր ու անտուն,  
Որի թշուառ կեանքը միշտ դառն է անհուն.  
Ես էն մոլոր տատառակն եմ անապատում,  
Որ ամեն մի քամու առաջն է ընկնում:
9. Երնէկ էն օր, երբ նեղ շիրիմ ես մտնեմ,  
Մնարիս մօտ աղիւս, կաւ ու քար զտնեմ.  
Զոյգ ոտքս դէպ զրբլա<sup>4)</sup> հողիս՝ անապատ,  
Մարմնով օձ ու մրջնակն հետ բաս մտնեմ<sup>5)</sup>:

1) հարբեցող թշուառական 2) թափառական ղերվիշ 3) խա-  
րիսխ, հաւդրուան 4) Ա. Ջաբրայի ուղղութիւնը, ուր երեսները  
դարձնում են մահմեդականները աղօթելու ժամանակ, 5) վէճի,  
կռուի բռնուեմ

10. Վայ էն օրին, երբ շիրիմըս նեղ անեն,  
Գլխիս հող ու չոր ու չով ու քար ածեն.  
Ոչ ոտըս կը լինի՝ փախչում օձերից,  
Ոչ ձեռք՝ մրջյունների հետ կռիւ անեմ:



## ՍԻՐՈՅ ԱՌԱՐԿԱՆ

11. Զուլֆերը<sup>1)</sup> երեսիդ գիւժ փըռած ունիս,  
Վարդ ու սոմբուլ<sup>2)</sup> մէկ տեղ խառնուած ունիս.  
Երբ հիւսերիդ մազերն ազատ թափուած են,  
Ամեն մազից մի սիրտ դու կախուած ունիս:

12. Արեակերպ զէմբըդ էլ շիկնած պիտի,  
Սիրաբոս սիրուդ նետից էլ խոցուած պիտի,  
Գիտես ինչու սե է էդ խալը թշիւ.  
Ինչ մօտ է, արեին էլ էրւած պիտի:

13. Քաղցր հովն, որ բուրում է քո քարուկից,  
Ինձ համար անուշ է սարի սմբուկից.  
Գիշերն, երբ շոյում եմ նկարդ գրկած,  
Առտուն վարդի հոտ է բուրում անկողնից:

1) Դսողոպնեբդ, 2) Սպիտակ ծաղիկ յակինթի (Hyacinthus orientalis) ցեղից, որ օգոստոսի վերջը ծածկում է սարերը:

14. Երնէկ նրանց, որոնք միշտ քեզ են տեսնում,  
Քեզ հետ զրոյց անում, քեզ ընկերակցում,  
Եթէ ոտ չունենամ, որ այց ելնեմ քեզ,  
Երնէկ նրանց տեսնեմ, որ քեզ են տեսնում:
15. Գեղեցկուհիս, իմ սիրտն, իման քո մօտ է,  
Սմեն ծածուկ ու աշկարան<sup>1)</sup> քո մօտ է:  
2ը գիտեմ, էս դարդը ումնից ստացայ,  
Դիտեմ միայն, որ զեզ դարման քո մօտ է:
16. Դու, որ նազով աշուիդ սուրմա դրել ես,  
2ինար բոյով արտերն ամեն դերել ես,  
Սեահեր հիւսերդ վզիդ խռնուած  
Ինչի էզպէս դու գլխիկոր լռել ես:

1) Յայտնի.

17. Քո զովֆի բուրմունքից ալլուում եմ, այ վարդ,  
Երեսիդ զոյնիցը հալում եմ, այ վարդ.  
Ես սիրահար, սիրուցդ դադար չունեմ,  
Դու մի Լէյլի<sup>1)</sup>, ես էլ Մաջնուն<sup>2)</sup>, եմ այ վարդ:
18. Երնէկ էնժամ, երբ քո զիզարն եմ տեսնում,  
Քո մագերի խնկահոտ լարն եմ տեսնում.  
Սիրտըս երբէք մի այլ հաճոյք չը գիտէ  
Բաց այն ժամից, երբ քո տիպարն եմ տեսնում:
19. Իմ նորակերտ փայլուն նկարըն ո՞ւր է,  
Եչքերը սուրմէած իմ հարըն ո՞ւր է.  
Նսեղն Թահէրի հոգին բիին է հասել  
Մօտէ դուրս գայ, իմ ազիզ հարըն ո՞ւր է:

2) 3) Նէզամիի և մի շարք այլ բանաստեղծների սիրահարական  
վէպերի հանրածանօթ հերոսները:

20. Առանց քեզ բարձրս սե օձ է իմ աչքում,  
 Օրըս զիշեր, սե հընոց է իմ աչքում.  
 Առանց քեզ երբ ճիմում եմ վարդարանում,  
 Վարդարանը փշանոց է իմ աչքում:
21. Առանց քեզ թող ծաղկոցում վարդ չը բացուի,  
 Թէ բացուի էլ, նա իբրեւ զօրդ չը բացուի.  
 Առանց քեզ թէ սիրա խնդայ, ժպտի շրթունք,  
 Դէմքը երբէք թախծից զուարթ չը բացուի:
22. Յիր ու ցան հիւսերըդ հողմին մի մատնիր,  
 Էդ խումար աչերէդ արիւն մի թափիր.  
 Աստուածային շնորհիցդ մի զրկիր ինձ,  
 Տարիքը կը զրկեն, դու մի ըշտապիր:

23. Երնէկ այս աշխարհից գնամ հեռանամ,  
 Զին ու Մաշինից էլ էն կողմը գնամ.  
 Սիրունուս այնտեղից պատգամ ուղարկեմ՝  
 Թէ հեռուին յօժար է՝ էլ հեռուն գնամ:
24. Դու հեռու իմ մօտից, սիրտս մոլորուած,  
 Ուրիշ ամեն պատկեր զլիւիցս է կորած.  
 Երեւոյդ եմ երգում, երկու աշխարհում<sup>1)</sup>  
 Եւրիշ փափագ չունեմ՝ սիրունուցս ի բաց:
25. Սիրտ իմ, կապոյտ շոր<sup>2)</sup> հագնեմ ես քո ձեռքից,  
 Վշտիդ զաղը ծաղկի պէս գնեմ սրտիս.  
 Միւրուգ զովքըն անեմ ինչպէս ցայլի երգ,  
 Մինչ Իսրաֆիլի<sup>3)</sup> փողն առնի ականջիս:

1) Ներկայ և հանդերձեալ 2) Նշան սուգի և տխրութեան 3) չորս  
 հրեշտակապետներից մէկը, որ երկնային փողը մի անգամ պիտի  
 փչէ բոլոր մահկանացուներին կեանքից զրկելու, իսկ միւս սնդամ  
 նրանց յարութիւն տալու:

20. Առանց քեզ բարձրս սև օձ է իմ աչքում,  
 Օրբս զիշեր, սև հրնոց է իմ աչքում.  
 Առանց քեզ երբ ճիմում եմ փարզաբանում,  
 Վարդաբանը փշանոց է իմ աչքում:

21. Առանց քեզ թող ծաղկոցում վարդ չը բացուի,  
 Թէ բացուի էլ, նա իբրև զարդ չը բացուի.  
 Առանց քեզ թէ սիրտ խնդայ, ժպտի շրթունք,  
 Դէմքը երբէք թախծից զուարթ չը բացուի:

22. Յիր ու ցան հիւսերըդ հողմին մի մատնիր,  
 Էդ խումար աչերէդ արինն մի թափիր.  
 Աստուածային շնորհիցդ մի զրկիւր ինձ,  
 Տարիքը կը զրկեն, դու մի ըշտապիր:

23. Երնէկ այս աշխարհից գնամ հեռանամ,  
 2ին ու Մաչինից էլ էն կողմը գնամ.  
 Սիրուհուս այնտեղից պատգամ ուղարկեմ՝  
 Թէ հեռուն յօժար է՝ էլ հեռուն գնամ:

24 Դու հեռու իմ մօտից, սիրտս մոլորուած,  
 Ուրիշ ամեն պատկեր զլիսիցս է կորած.  
 Երեւիդ եմ երգում, երկու աշխարհում<sup>1)</sup>  
 Եւրիշ վաւիազ չունեմ՝ սիրունուցս ի բաց:

25 Սիրտ իմ, կապոյտ շոր<sup>2)</sup> հագնեմ ես քո ձեռքից,  
 Վշտիդ դադը ծաղկի պէս դնեմ սրտիս.  
 Սիրուդ զովքըն անեմ ինչպէս ցայգի երդ,  
 Մինչ Իսրաֆիլի<sup>3)</sup> փողն առնի ականջիս:

1) Ներկայ և հանգերձեալ 2) նշան սուգի և տխրութեան 3) չորս հրեշտակապետներից մէկը, որ երկնային փողը մի անգամ պիտի փչէ բոլոր մահկանացւներին կեանքից զրկելու, իսկ միւս սնդամ՝ նշանց յարութիւն տալու:

26. Նարբս հեռու, հալիցքն անտեղեակ եմ,  
մէկը չըկայ, որ մի խաբար ուղարկեմ,  
Տէր իմ, փոքրիկ միջոց տուր մահիս համար,  
Որ մի տեսքէս իրա տեսքին հասցնեմ:

27. Իմ ազիզ, խոռոչն աչքիս՝ բո պալատը,  
Աչքամէջքս թող կոխոտի բո ոտը.  
Վախենում եմ ոտդ անգիտութեամբ զնեւ,  
Թարթիչներէս փուշը ծակի բո ոտը:

28. Սիրուհուս երեսին երբ մայիլ<sup>1)</sup> եմ ես,  
Մի արգելիլ, սիրովը տարուել եմ ես.  
Աստուած սիրես, ուղտապան, կամաց քշիր,  
էն մեծ կաքաւանից կտրուել եմ ես:

1) Զմայլումս,

29. Մի սիրտ ունեմ էշխիցդ գիժ՝ կը պայթի.  
Թարթիչներս խփեմ՝ հեղեղ կը ցայտի,  
Սիրող սիրտը թաց ճիպոտի է նման.  
Մի ծայրն այրում, մի սից արին կը կաթի:

30. Մէջս լի արցունքով, սիրտս միշտ հրով,  
Կեանքիս դաւաթը ջիգեսարի<sup>1)</sup> արինով.  
Բոյրեցց կեանք կը դտնեմ ես մահից յետ,  
Թէ զիպուածով անցնես հողիս վրայով:

31. Զուխտ զօլֆիդ ուրարիս<sup>2)</sup> լար քաշեմ, զալում,  
էս իմ խաբար հալից դու լինչ ես ուզում.  
Դու որ եար լինելու զլուխ չունես ինձ,  
Ո՛ւր ես կէս գիշերին քունս վրդովում:

1) Լիտրդ, սիրտ. 2) լարաւոր գործիք՝ թառից մի քիչ փոքր.


32. Գիշերը աստղերն համարում,  
Կէս գիշերին ականջս քեզ եմ լարում.  
Կէս գիշերից յետոյ, երբ չես դալիս դու,  
Աչքիցս արտասուքի հեղեղ է թորում:

33. Եկ էս գիշեր լռասաւորիւ սենեակս,  
Մի դառնացուր մի օրւայ անջատ կեանքս.  
Երգում եմ էդ ջուխտ յօնքերիդ կամարով,  
Ես ջութատ դարդ եմ, երբ հեռու է հոգեակս:

34. Երգում եմ, թէ մօտ դաս, կը փայփայեմ քեզ,  
Թէ չը դաս՝ քեզնից դուրի՝ կը տապաւնուեմ ես.  
Ինչ դարդ որ ունես, բեր սրտիս մէջը դիւր  
Կը մեռնեմ, կամ կայրուեմ, կը յարմարուեմ ես:

35. Առանց քեզ՝ արցունքը կախուած աչերիս,  
Առանց քեզ անպտուղ է ծառը յոյսիս.  
Առանց քեզ մի անկիւն գիշեր ու ցերեկ  
Մենակ նստած եմ մինչ վախճանը կեանքիս:

36. Մութ գիշեր է, դայլը ոչխար կը զարկի,  
Ջուխտ դոյժերդ կապ տուր, գէպ ինձ շտպարի.  
Քրթունքիդ անկիւնից տուր ինձ մի համբոյր,  
Ասա՝ Ասածու սիրուն տուի ազըատի:



ՍԻՐՈՅ ՏԱՌԱՊԱՆԿԸ.

37. Ինձ չարաչար մորթես, ումնից ան ունես,  
 Անարգես, վռնդես, ումնից ան ունես.  
 Ես որ կէս սիրտ ունեմ, ան չունեմ մարդից,  
 Քո սիրտն երկու աշխարհ, ումնի՞ց ան ունես:
38. Սիրտս քո դարդիցը միշտ դառը թոյն է.  
 Բարձրս ազիւս, կողինքըս հող, սև դոյն է.  
 Միակ մեղքը, որ ունեմ, քեզ սիրելն է,  
 2է որ ով սիրել է քեզ, հալը նոյնն է:
39. Նկէք, էրուած սրտեր, դարդերս լացենք,  
 Գեղ վարդի կորստից աչերըս թացենք.  
 Բուրով<sup>1)</sup> հետ վարդի սիրով խենթանանք:  
 Թէ բուրովը չը լայ, ինքնեքս լացենք.

1) Հարգատա պարսկերէն ձևն է, հակառակ մեզնում ընդունուած «բուրով» ասլուով, «բուրով» ձևերի, որոնցից վերջինը աղղկեցութիւն է թուրքերէնի:

40. Գործըս ամբողջ ախ ու վախն է էս գիշեր,  
 Սարբս<sup>1)</sup> կորել, սրտիս դադն է էս գիշեր.  
 Անցած գիշեր թուաց՝ մի ժամ խնդացի,  
 Երեկուայ հաճոյքիս հախն է էս գիշեր:
41. Ո՛վ Տէր, որքանն ես տանջուած եմ էս սրտից,  
 Զօր գիշեր ցաւի մատնուած եմ էս սրտից.  
 Զատ եմ ան քաշել ես, երնէկ իմ ախից  
 Յայտնի դառնայ, որ փրկուած եմ էս սրտից:
42. Սև է բախտս, նա զլուխն է խոնարհում,  
 Սև է օրս, նա զլիւթվալը է կանգնում.  
 Տառապեցի անվերջ սիրոյ ճիւղանում  
 Սրտիս ձեռքից, խեղդուիլի նա արեան ծովում:

1) Համբերութիւնս

43. Ես ընկել եմ անապատ գիշեր ցերեկ,  
Արցունքս ազի հեղեղատ գիշեր ցերեկ.  
Ոչ ջերմ ունեմ և ոչ մի տեղս է ցաւում,  
Բայց նալաս<sup>1)</sup> է միշտ առատ գիշեր ցերեկ:

44. Սիրտս մի եղէդ է, երբ ա՛խ է քաշում,  
Ինձ միշտ անջատմանդ վիշտն է հալածում.  
Տապալուելու մինչ վերջին դատաստան է,  
Իսկ է՛ն երբ է, Աստուած է լոկ իմանում:

45. Եար, առանցքից սիրտս այլուում է անխնայ,  
Երեսիդ թէ նայեմ, էլ դարդ չի մնայ.  
Բաժան քաժան թէ անեն դարդը սրտիս,  
Աշխարհումքս էլ անցաւ մարդ չի մնայ:

1) հեծեծանքս:

46. Արի մօտս, մի տես հալս, սիրուհիս,  
Սրտնեղած եմ, էս գիշեր կա՛ց դու մօտիս.  
Վարդը գլխիդ խփիր, վա՛րդ իմ նորարաց,  
Վարդի տեղը ձեռքըս ես խփեմ գլխիս:

47. Ես որ սիրտ էրուած եմ, ինչպէս չը հեծեմ,  
Ես արհամարուած եմ, ինչպէս չը հեծեմ.  
Բոլրոյնները վարդին նստած են հեծում,  
Վարդից անջատուած եմ, ինչպէս չը հեծեմ:

48. Ես որ սիրտս է թռչնած, ինչպէս չը հեծեմ,  
Թե, փետուրս կոտրած, ինչպէս չը հեծեմ,  
Սմենքն աւում են՝ ֆուլան<sup>1)</sup>, քիչ հեկեկա՛,  
Դու մտքումս նստած, ինչպէս չը հեծեմ:

1) Այսինչ (անունը՝ Թահէր)

49. Ես իմ կեանքից անտեղեակ ու անկարձեռն եմ,  
 2ը զիտեմ, ճանքին եմ, թէ տանն ընկած եմ,  
 Անդ քո ձեռքիցդ, անխիղճ անաստուած,  
 Դիտեմ, որ կեանքս ամբողջ դռներն ընկած եմ:

50. Սրտիկդ իմ, առանց քեզ անճար եմ ապրում,  
 Սրտումս փուշ, տատառակ է իմ աչերում.  
 Ձեռքերս, որ երբեմն վզիդ էր փաթում,  
 Այժմ ճաշճի նման գլխիս եմ զարնում:

51. Էշխիցդ կրծքիս մէջ կրակ է ընկած,  
 Գրակի մէջ սիրտ ու հողիս է էրւած.  
 Թէ շունդ ոտ գնի աչքիս, սիրունիս,  
 Կոխած հողը թարթիչներով կ'առնեմ ցած:

52. Ե՛րբ իմ սիրտը վշտով լցուած չի լինում,  
 Որ սիրունիս ինձ սիրացած չի լինում.  
 Տիրոջ հազար ողորմին տամ ես վշտի՜ն,  
 Երբէք նա ինձնից անջատուած չի լինում:

53. Դու իսկ հիւսերիդ տենչով է բռնուած,  
 Սիրտս լուսնեքիսիդ սիրով է տարուած.  
 Երբ որ աչքս լուսնի նորեկն է ուզում,  
 Դէմքս յօնքերիդ կամարին է ուղղած:

54 Մի սիրտ ունեմ՝ թռչուն է՝ ոտը կտառած,  
 Ինչպէս մի հաւ՝ ծովի ափին ցած նստած.  
 Բոլորն ասում են. «Թահէր, թան ուռազիր»,  
 Ի՜նչպէս կուզէք ձայն տայ թառը պատուում:

55. Սիրաս սիրունուս ցանցում է թրայրտում,  
Յաւ է անջատումս, ցաւ և զուգորդում.  
Այս վիրանում<sup>1)</sup> առանց արիւն սիրտ չը կայ,  
Ինչպէս Քեօրբալայի<sup>2)</sup> սև անապատում:

1) Զանդուած ուժ, աշխնքն աշխարհում:

2) Որտեղ նահատակուեց Իմամ սէֆէյնը:

## ՍԻՐՈՅ ՄՐՄՈՒՆՁՆԵՐ

ԵՒ ՏԱՐԱԿՈՅՍՆԵՐ

56. Ես դարգի մէջ, դարման կը գայ հաբիցս,  
Աղատութեան ֆարման<sup>1)</sup> կը գայ հարիցս.  
Թէ դահիճը կաշիս էլ քերթէ ինձնից,  
Ատուած երբէք զարձում չի տայ հարիցս:

57. Առանց քեզ ճգնութեան դօտի կը կապիւմ,  
Հրեայ, կուտալաշտ եմ, թէ որ ծիծաղեմ.  
Քս սիրոյ ուխտից յետ սով իմ սիրունի,  
Ուրիշի հետ ես ուխտ ինչպէս կը կապիւմ:

58. Թէ Յովսէփի նման տանին ինձ զնդան  
Կամ հեծե՞ծ եմ վշտից անբախտի նման,  
Թէ հարիւր այդեպան թշնամիս զառնան,  
Միշտ խնդալով կը գամ ես քօ վարդաբան:

1) Հրաման

59. Էշխդ հողուցս լոկ հուրը կը վաճի,  
 Կրծքիցս զուրս մի բուռ մոխիր կը հանի.  
 Սիրոյ տունիկ սրտիցս թէ զուրս տանեն,  
 Հազար ճղներ ամեն կողմեր կը ցանի:

60. Վայ իմ սրտին, վայ իմ սրտին ու հողուն,  
 Մեղը աչքերս են զործում, բայց սիրտս է տու.  
 Թէ աչքերը չը տեսնեն սիրուն զէմքեր, (ժուս  
 Ուսկից զիտնայ սիրտը, թէ ո՞րն է սիրուն:

61. Աչքիցս ու սրտիցս ես կանչում եմ դանդ,  
 Ինչ աչքըս տեսնում, սրտիս է հարազատ:  
 Մի հատ խանչալ չինեմ ծայրը փոխդից<sup>1)</sup>,  
 Խփեմ աչքիս, զուց՝ սիրտս անեմ ազատ:

1) Գողտտից՝

2. Մի սիրտ ունեմ, որ երբէք լաւ չի զգում,  
 Տուած խրատներս օգուտ չի բերում,  
 Թէ քամուն եմ տալիս, քամին չի տանում,  
 Թէ կրակն եմ նետում, ծուխը չի ելնում:

3. Զոյգ աչերդ փիալայ է<sup>1)</sup> գինով լի.  
 Զոյգ զոլֆերդ հասուլմն է Ռէյ<sup>2)</sup> աշխարհի.  
 Միշտ ժամադիր եղար այսօր ու էգուց,  
 2ը գիտեմ բո էգուցը երբ կը լինի:

34. Սիրտս մի քաղցրաձայն սոխակ է ասես,  
 Որ ամեն առաւօտ ողբում է պէս պէս.  
 Վարդի ճիւղին բոլորը ձայնից առաւուն.  
 Այ՛ վարդ, դաւաճան ես, դու դաւաճան ես:

1) Քենջան, բաժակ. 2) Հին համբաւաւոր քաղաք Թէհրանի մօտ,  
 կործանուած մոնղոլներէլ արչաւանքի ժամանակ.

65. Սիրտս վշտիդ ձեռքից վեր վար կը լինի,  
 Զոյգ աչերս ջիգեարիս արնով է լի.  
 Նոս, ում ազիդ ետրը միշտ հաղ է ծախում,  
 Մրտումը վիշտ, հոգում շանթեր կը լինի:

66. Մի վարդ ունեմ, որին ծայր ու փայլ տուի,  
 Աչքերիս ջրով նրան ջուր խմցրի.  
 Աստծու դանոյրի մօտ երբ է ընդունում՝  
 Վարդըն իմը՝ վարդաշուրն օտար տանի:

67. Այգուդ վարդին սիրտս տենչում է վառում,  
 Կուրծքս ծայր է ծայր դադովդ է պատած  
 Կամեցայ կակաշով ուրախանալ ես,  
 Տեսայ կակաշն էլ քո դադովն է այրում:

68. Աւերած սրտերդ հազարից է շատ,  
 Արնոտած ջիգեարներդ բիւրիցէ շատ.  
 Քաշած դադերդ հազարներով իմ համբել,  
 Դեռ չը համարածս հաշուածից է շատ:

69. Աստուած իմ, դանդ էս սրտից, դադ էս սրտից,  
 Մի օր ուրախ չեղայ հաստատ էս սրտից.  
 Երբ վաղը դատաւորն իր գատը կտրի,  
 Կանեմ հարիւր ու հազար դանդ էս սրտից:

70. Դանդ էս սրտից, որ իմ կամքով չի վարում,  
 Դանդ էս սրտից, միշտ ինձ է վիրաւորում.  
 Դանդ էս սրտից, որ միշտ վայրի թռչնի պէս,  
 Հատիկ դեռ չը կերած՝ ընկած եմ ցանցում:

71. Փէշդ նորից դու իմ ձեռքից հանեցիր,  
Արաբքիցդ երբէք չը փռշմանեցիր.  
Ես էլ դնամ մէկի փէշիցը բռնեմ,  
Որ հանգիստս քեզ պէս չանի ցանուցիր:

Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ը

72. Ով սիրահար է, իրանից վախ չունի,  
Երուսը կոճղից, վնդանից վախ չունի.  
Սիրահարի սիրտը սոված մի դայլ է,  
Հովուի հարայ ու շիւանից վախ չունի:

- ✓73. Սիրահարը ցաւին անզգայ կըլնի,  
Յովրի պէս որդերին ենթակայ կըլնի.  
Հասանի<sup>1)</sup> պէս թոյնի բաժակ կընդունէ  
Հոսէյնի<sup>2)</sup> պէս Քեարբալի վկայ կըլնի:

1) Ալիի աւագ որդին. 2) Ալիի կրտսեր որդին, որբերդական մահով  
նահատակուած Մոսիայի որդի Եղիշէ հրամանով Զ<sup>1</sup> տրբալա-  
յում 680 (թ. 61 թ. հէջրի):

ԱՇԱՐԽԱՐՀԱՅԻՆ ԱՆԱՐԴՍՐՈՒԻՆՆԵՐ

74. Տիեզերքի անէին թէ ձեռքսէր հասած,  
Կը հարցնէի, թէ այդ ինչեր է արուած.  
Մէկին հարիւր տեսակ շնորհ ես արել,  
Միւսին մի դարեհաց, արնով չաղախուած:

75. Մի սերմնացան հեծեծանքով էս դաշտում,  
Երնաթոր աչքերով ծաղկունք էր ցանում.  
Յանում էր ու ասում. «Այ ափսոս, ափսոս,  
Որ պէտք է ցանելու թողնել էս դաշտում»:

76. Գարունն եկաւ, դաշտ տափաստան է դուլւած,  
Ջահէլութիւնն էլ դարուն էր, նա զնաց.  
Ջահէյների շիրիմին վարդ է բսնում,  
Երբ հարսն աղջիկ ծաղկոցում են հաւաքուած:

77. Գու որ անծանօթես երկնից գիտութեան,  
Գու որ ոտ չես դրել շէմքը զինեռան,  
Գու որ գեռ չգիտես քո շարն ու բարին  
Գու երբմարդ կը դառնաս, ով թշուառական:

78. Ախիցս եօթ երկնքից շանթեր կը թափի,  
Ձայն որ հանեմ, սրտերն արիւն կը կաթի.  
Քո սիրտը որ վշտից երբէք չի այրուել,  
Էլուած սրտից խելքըդ ինչ բան կը դատի:

79. Անտէր սրտին թառամելը կը սազի.  
Ով որ գարդ չունի, մեռնելը կը սազի.  
Եյն անձը, որ աշոգդող չէ սիրոյ մէջ,  
Կտոր կտոր հրումն այրել կը սազի:

92. Մի սիրտ ունեմ հագոր<sup>1)</sup> շուշայի նման,  
Ա՛խ քաշելիս հեծեծում է անսահման,  
Արցունքս թէ արիւն է, մի՛ դարմանաք,  
Արմատը թաղուած է խորունկ մէջ արեան:

✓ 93. Թէ որ դարդս մէկը լինէր, ինչ կըլնէր,  
Եւ կամ ցաւերս քիչ լինէր, ինչ կըլնէր,  
Թէ բարձիս մօտ սիրունիս կամ հաքիմըս<sup>2)</sup>,  
Երկուսից զէթ մէկը լինէր, ինչ կըլնէր:

94. Աշխարհիս ցաւը ինձնից անբաժան է,  
Մեզ դարդից փրկողը լոկ քիմիան<sup>3)</sup> է.  
Ամեն դարդ վերջը մի՛ դարման կունենայ,  
Անէութիւնը իմ սրտի դարմանն է:

1) Նուրը, քնքոյշ 2) Բժիշկս, 3) Փիլիսոփայական քար, հրաշք.

95. Տէր իմ, ում հետ լինեմ, ում հետ լինեմ ես,  
Ես անձեռ ու ոտ եմ, ում հետ լինեմ ես.  
Թէ ամենքն ինձ խրկեն, կապաւինեմ բեզ,  
Դու էլ որ վռնդես, էլ ուր զիմեմ ես:

96. Դարդոտ ու քնաւեր, ա՛խ, ուր զիմեմ ես,  
Տուն ու մունս աւեր, ա՛խ, ուր զիմեմ ես.  
Ամենից հալածուած ես քեզ կմ գալիս.  
Դու էլ թէ հալածես, էլ ուր զիմեմ ես:

97. Ծաղկապաններ էլ դուք կակա՛յ մի ցանէր,  
Պարտիզպաններ, լոկ մի բուռ վարդ պահաւա-  
նթէ ծաղկանց ուխտըն այն էր որ տեսայ, (նէր.  
Պարդի արմատը քանդէր ու վուշ ցանէր:

98. Երնէկ նրան, ում Տէրն է միշտ պահապան,  
Փառք և օրհներգութիւն պահուած է նրան.  
Երնէկ նրանց, որոնց մրմունջն աղօթք է,  
Նրանց հատուցումն է դրախտ յաւիտեան:

99. Գիշերը մութ, ճամբաս քարոտ, ես հարբած,  
Ձեռքիցըս գաւաթն ընկաւ, բայց ողջ մնաց.  
Հոգատարը լաւ էր պահպանել նրան,  
Թէ չէ՝ հարիւր գաւաթ ջարդուեց՝ ցած չընկած:

100. Թէ հարբած, աղտոտ եմ, ապաւէնս ես դու,  
Թէ անձեռ ու ոտ եմ, ապաւէնս ես դու.  
Թէ դեհարր<sup>1)</sup> եմ, քրիստոնեայ եկամ մօլսուլման  
Ինչ միլլէթ էլ որ եմ, ապաւէնս ես դու:



1) Զրադաշտական, կրակապաշտ.

# III ՀԱՅԱՍՏԱՆԻ

تغزل

1.

Քանի քեզ պէս եարից ես վշտահար եմ.  
Ոտից գլուխ այրուած մի սե բուրվառեմ.  
Անբախտ եար եմ սիրտըս էրւած ու խանձւած,  
Գոթիքի մի չնչին մօխրի պատառեմ.

Ոչ կիւր ունեմ առանց քեզ, ոչ քուն, կարծես  
Մազերիս ծայրերին ցցուած խէնջար են:

Առանց քեզ արքայութիւն հուրի, թուրա<sup>1)</sup>  
Թէ երջանիկ անեն ինձ, ես քափար<sup>2)</sup> եմ:

Չահի թաղը պարծանք չիլնի ինձ համար,  
Խճճւած մազերըս թաղից յարմար են:

Գլխիս վերեր արմաս է շողշողում,  
Անկողնումս փուշ, տատասկ անհամար են.

1) Եւրոպական մի ծառ, երջանկութիւն, 2) Անհատաւոր:

Թոմի պէս ինձ հանգցնեն հարիւր անգամ,  
Աւելի լուսաւոր ու զիւրաւառ եմ:

Ո՛չ հանդերձեալ, զի էս կեանքին պէտք եկայ,  
Մի անշուք, անստուղ արմաւի ծառ եմ:

Դէմքդ արեւ, բայց ինձ համար արեւելում,  
Ես մի թոշնած, չորացած նունուֆար եմ,

Ես մի սալամանդրա<sup>1)</sup> սիրոյ կրակում,  
Բայց փետրահան թռչուն առանցի փառ եմ:

Ես մի սիրոյ առատ ստղատու ծառ եմ,  
Ըուքս՝ կարօտ, պտղով ես ցրտահար եմ:

Էլ ինձ ոչ որ երբէք մի արժէք չի տալ,  
Այս աշխարհում ամենից ապիկար եմ:

Ախ ու վախով երկու աշխարհը<sup>2)</sup> կայրեմ,  
Ջիգեարիս դադիցը ես սաղանդար եմ:

Մենանոցումս այնքան տխուր եմ, տրտում,  
Կարծես կրակն ընկած մող՝ հրավորու եմ:

Այս աշխարհից բնաւ օգուտ չը գտայ,  
Ես օրէց օր առաջուանից վատթար եմ:

1) Ինկատի ունի այն հաւատալիքը, որի համաձայն սալամանդրան  
(سندريه) կրակի միջով անվնաս անցնելու ընդունակութիւնն ունէր:  
2) Ներկայ և հանդերձեալ:

Այս աշխարհում որք մնացի առանց քեզ,  
Ինչպէս անմեղ մանուկ անհայր ու մայր եմ:

Բարեպաշտների մէջ քաֆար եմ կարծես,  
Քաֆարների միջին ես ուղղափառ եմ:

Սիրոյ շրջանում մի չնչին արարած՝  
Սրտի աշխարհում ես զիմապաշտ եար եմ:

Թէ օրական հարիւր անգամ տեսնեմ քեզ,  
Կրկին իմ հոգեակից կարօտավառ եմ:

Պահլաւերէն լեզուի մէջ վարպետ եմ ես<sup>1)</sup>,  
Սիրահարի գրքում մի տողաշար<sup>2)</sup> եմ:

Աստուած իմ, Թահէրի սէրն անհետ կորչի,  
Սիրունների սիրուց ես զիւահար եմ:

## 2.

Ես մի սիրտըն էլած խղճալի եար եմ  
Որ դէլբարիս<sup>3)</sup> սիրուցը բոցավառ եմ:

Սրտումս մի դաղ ունեմ վարդերեսից,  
Հոգուս մէջ նշտարները շարէ շար են:

1) Որ նշան է լիմաստութեան, կախարդութեան:

2) مسطر տողաշար—տրանսպարանտ՝ տողերի տեղ թելերով յարմարեցում:  
3) Միտ նուաճող, զեղեցկուհի:

Դէմքը սիրուց փայլել է սրտումս, ուստի  
Ինչպէս նորածագ արև բոցավառ եմ:

Ես մի երկչոտ որս եմ սիրտս նետահար,  
Որ բաղդի ցանցի մէջ սարսափահար եմ:

Թէ քեզնից զատ մի ուրիշ սէր ունենամ,  
Յօթանասներկու ազգի մէջ քաֆար եմ:

Այս անցաւոր երկրում նշան խփելում,  
Ես լարաբեկ մի նետ՝ անթև ու փառ եմ:

Ողջը կայրեմ, ողջը կայրեմ, կը վառեմ,  
Տարութեամբս ես հուր՝ միշտ բոցավառ եմ:

Ես Թահէրն եմ, արիւն արցունք կուլ տալուս  
Մահամէդին խոնարհագոյն նովբար<sup>1)</sup> եմ:

3.

Սիրտ իմ, սիրոյ մէջ ես հարիւր զաֆթար եմ,  
Ձոյգ աշխարհը անգիր զիտցող հանճար եմ:

Յս մի բոլբոլ եմ՝ վարզը դեռ չը բացուած  
Մոխրի տակին այրուող հուր՝ զիւրավառ եմ:

Սիրտըս այրուում է վշտից, թէ խանձուի էլ:

Սիրածիս տենչերին կամակատար եմ:

Ես հալուէ եմ կրակարանի միջում,  
Ինն երկնքի համար վառուող բուրվառ եմ:

Վշտերի լեղակից<sup>1)</sup> սիրտս արիւն դարձաւ  
Բայց էլի գեղադէմ բան նունուֆար եմ:

Այս կակաչների մէջ, ինչպէս հնոցում,  
Սրտիս գաղից ես ածուխ մշտավառ եմ:

Ոչ ուժեղ եմ թշնամու հետ պայքարեմ,  
Ոչ սիրածիս համար թանկագին քար եմ:

Կեանքիս բաժակն աշխարհից թէպէտ և լի  
Առանց սիրոյ՝ արեան մէջ անսպառ եմ:

Սրածում եմ միշտ այս մարդում, արօտում,  
Ես մի թռչնակ՝ բազ ու պտղի համար եմ:

Ես Թահէրն եմ, որ սիրունների սիրուց  
Սիրտս մինչև պոռնկն արիւնահար եմ:

1) نيل նշանակում է ա) լեղակ, բ) նեղոս գետը: Առաջինը նշան է վշտի, զառնութեան, երկրորդը՝ յորդութեան մեղք. զերազանցիկն առաջին նշանակութիւնը, ի նկատի ունենալով հետագայ նու-  
նութարի պատկերը:

Ես մի խղճուկ փասիան առանցի վառ եմ,  
Աննպատակ այրուող մոմ՝ դիւրավառ եմ.

Բոլորը բնեւում նստած են հանգիստ,  
Էս վիճանում ես մի թռչնակ՝ անփառ եմ:

Սյսրան քաջ եմ, բայց այնպէս արհամարուած,  
Կարծես թէ մի հին դիմակալի ծայր եմ:

Սիրտ իմ, քանի չես մեռել, չունես հանգիստ,  
Քանի հոգի չեմ տուել, ցաւազար եմ:

Սիրտս վարդերեսից խիստ այրուած է,  
Հոգուս երակներում ցիցցից նշտար են:

Ես ծննդեամբ Թահէր<sup>1)</sup> եմ ի սկզբունէ,  
Ուստի և անունով Բաբա Թահէր եմ:



## ԲԱՌԱՅՈՒՑԱԿ

Այս փոքրիկ բառացուցակում գետեղուած  
են այն պարսկերէն բառերը, որոնք բնագրի  
ծանօթութիւնների մէջ չեն մտել:

Սզիզ — թանկագին, սիրելի.

Ասլան — առիւծ.

Բաղբան — այգեպան.

Դադ — արդարադատութիւն, օգնութիւն կանչելը.

Դադ — այրոց շիկացած երկաթով.

Դարդ — ցաւ, վիշտ.

Դարման — դեղ.

Դիդար — տեսք, դէմք.

Եար — Բնկեր, ընկերուհի. — Թուրքերէնում՝ սի-  
րեկան, սիրուհի.

Ջնդան — Բանտ.

Ըռանդ — տ. ռանդ:

Էշխ — սէր, կիբը.

Իման — հաւատ.

Լա՛լ — սուտակ, յակինթ.

Խաբար — տեղեկութիւն.

1) Բառացի՝ սուրբ, մաքուր.

Խումար (իսկապէս խումար) – արբեցութիւն,  
հարբածութիւն.

Հալ—վիճակ, զրութիւն.

Հախ— (ح, Խ-ն փոխարինում է Ղ հնչիւնի  
խօւլ ձեւ. հմ. վրացերէն ծղալի բա-  
ռի Ղ հնչիւնը) – այստեղ՝ արիտուր.

Հաքիմ— բժիշկ.

Հուրի— հուրի, արքայութեան կոյս:

Միլլէթ (ملل, իսկապէս մէլլաթ) – ազգ, կրօն.

Նազոր – նուրբ, քնքով.

Չուշայ— (իսկապէս շիշայ) ապակի.

Ջուխտ— (իսկապէս ջոֆտ) գոյգ.

Ռաճգ— գոյն.

Սուրմա— սուրմա, անգոյր.

Փալանգ— յովազ:



# Corrigenda

ՆԿԱՏՈՒԱԾ ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Էջ - Տող    | ՏՊՈՒՄԵ Է             | ՊԷՏԵ Է ԼԻՆԵ       |
|-------------|----------------------|-------------------|
| Նախքան      | Arménian             | Arménien          |
| առաջաբան    | բայլերն              | բայլերին          |
| 2 վերևից 1  | զաղուինից            | Ղաղուինից         |
| 3 ներքև. 1  | զործածական է, ներ-   | զործածական է ն    |
| 18 ներքև. 5 | կայումս              | կայուս            |
| 19 վերևից 7 | ռիթմական             | ռիթմական          |
| » » 12      | հնչյունաչափերի       | հնչյունաչափերի    |
| » ներքև. 1  | րից                  | որից              |
| 20 » 10     | -----1               | -----1)           |
| ՔՈՒՅԵՆՆԵՐ   |                      |                   |
| 11 ներքև. 1 | լիարդ                | լեարդ             |
| 20 » 1      | Իմամ Զոէյնը          | Իմամ Զոսէյնը      |
| 25 վերև. 3  | հաղալներով իմ համընկ | հաղալներով իմ համ |
| 28 » 1      | աշարխարհային անար-   | աշխարհային անս    |
|             | գալուսներ            | դալուսներ         |
| » ներքև. 5  | ցանկու               | ցանկ ու           |
| 31 » 3      | անդարտ               | անդարդ            |

1336  
118

ԳԻՆՆ Է Յ ՂԹԱՆ  
ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆՈՒՄ 40 ՍԵՆԹ



ՀՀ Ազգային գրադարան



NL0310587

9216